



ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՅՄԱՏԱԻ ՉԵՐՄԷ
EUROPEAN UNION FOR ARMENIA



ԾՆՈՂԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՒՆԱՐԿ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



Empowered lives.
Resilient nations.



**Ծնողավարության ձեռնարկ
հատուկ կարիքներ ունեցող
երեխաների ծնողների հետ
աշխատանքների համար**



ԵՄՊՈՒՅԱԿԱԼ ՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՃՃԱՏԱՆԻ ՎԱՍՏ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Ծնողավարության ձեռնարկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների հետ աշխատանքների համար: Երևան, 98 էջ:

«Մարդու Իրավունքների Իսթանուլմ և Պաշտպանություն» ծրագիր

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները պատկանում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի տեսակետների հետ:

**Հեղինակներ՝ Սիրանուշ Անտոնյան,
Նինա Մովսիսյան,
Լիլիթ Թովմասյան**

Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



Empowered lives.
Resilient nations.



Բովանդակություն

Նախաբան	4
Ծնող-երեխա, ծնող-մասնագետ փոխհարաբերություններում հաճախ հանդիպող դժվարությունները.....	7
Ծնողի առաջին այցելությունը, խնդրի ձևակերպումը և աշխատանքի տեսակի որոշումը / խմբային և անհատական/.....	9
Մասնակիցների ընտրությունն ու խմբային աշխատանքների իրականացումը	16
Ծնողավարության հմտությունները զարգացնող թրեյնինգ մասնագետների համար.....	17
Հանդիպում առաջին.....	18
Հանդիպում երկրորդ.....	24
Հանդիպում երրորդ.....	28
Հանդիպում չորրորդ.....	34
Հանդիպում հինգերորդ.....	39
Հանդիպում վեցերորդ.....	47
Հանդիպում յոթերորդ.....	52
Հանդիպում ութերորդ.....	58
Հանդիպում իններորդ.....	64
Հանդիպում տասերորդ.....	67
Հանդիպում տասնմեկերորդ.....	77
Հանդիպում տասներկուերորդ.....	81
Հանդիպում տասներեքերորդ.....	84
Հանդիպում տասնչորսերորդ.....	86
Հանդիպում տասնհինգերորդ.....	89
Հանդիպում տասնվեցերորդ.....	92
Գրականություն.....	96

Նախարան

Ծնող-երեխա փոխհարաբերությունների խնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների հետաքրքրությունների շրջանակում: Զարգացման տարբեր խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս առանց ծնողների ներգրավվածության և փոխհամագործակցության գրեթե հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքների: Ուստի ծնողավարության հմտությունների տիրապետումը առաջնային է յուրաքանչյուր մասնագետի համար, որը գործունեության բերումով շփվում է երեխաների և նրանց ծնողների հետ:

Ծնող-երեխա փոխհարաբերությունները կազմավորվում են ընտանիքում, որտեղ նաև տեղի է ունենում երեխայի ֆիզիկական, հուզական և ինտելեկտուալ զարգացումը: Ընտանիքը այն սոցիալական միջավայրն է, որտեղ բավարարվում են երեխայի կարևորագույն պահանջմունքները, այդ թվում՝ սիրո և կապվածության, ապահովության և պաշտպանվածության պահանջմունքները: Անշուշտ, կարևոր է ընտանիքում երեխայի դերը, ծնողների վերաբերմունքը նրա հանդեպ, քանզի երեխայի վարքը պայմանավորված է նրանով, թե ծնողներն ինչպիսի զգացումներ, ինչ սպասումներ ունեն նրանից, ինչպես են գնահատում նրան:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների խնդիրը՝ պայմանավորված տարբեր սերունդների հայացքներով և մտածելակերպով, եղել է և կա մարդկության գոյությունից ի վեր:

Այս ոլորտում հաճախ են հանդիպում շրջապատի կողմից երեխայի խնդրի ընդունման և հաղթահարման հետ կապված դժվարությունները, քանի որ հասարակությունը դեռևս ամբողջությամբ պատրաստ չէ ընդունել հոգեբանական ծառայություններից օգտվելու անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, վերջին տասնամյակում զգալիորեն աճել է հոգեբանական ծառայությունների և մասնագետների պահանջարկը: Տարբեր հաստատություններում ստեղծվել են հոգեբանական ծառայություններ, տարատեսակ բաժիններ, որտեղ յուրաքանչյուր ոք անհրաժեշտության դեպքում կարող է ստանալ հոգեբանական աջակցություն: Նախապրոցական և դպրոցական հաստատություններում հատկապես

շեշտադրվում է ծնող-երեխա փոխհարաբերությունների շտկումը և բարելավումը:

Ուստի մասնագիտական աջակցության տրամադրման հետ համատեղ կարևորվում է տարբեր աշխատանքային գործիքների, մեթոդների և մեթոդիկաների, թեստերի և հարցաթերթերի, գործնական ձեռնարկների ստեղծումը:

Հայաստանում հոգեբանական գիտությունը բավականին երիտասարդ է, ինչի պատճառով հայերեն մեթոդական ձեռնարկները սակավաթիվ են, ուստի անհրաժեշտություն առաջացավ ստեղծել այնպիսի ձեռնարկ, որը կօգնի մասնագետներին ծնող-երեխա, ծնող-մասնագետ փոխհարաբերություններում առկա խնդիրները հաղթահարելու գործում: Ձեռնարկը պարունակում է ինչպես տեսական վերլուծություններ՝ հիմնված մի շարք հեղինակների տեսական դրույթների վրա /Լ.Դ Ստոյլարենկո, Ա.Ի. Զախարով, Լ.Բ. Շնեյդեր, Ս.Դ Արզումանյան, Ա.Ս Վիգոտսկի, Կ. Հոլլ և այլք/, այնպես էլ գործնական քայլեր և սկզբունքներ, որոնց շնորհիվ մասնագետները կարող են իրականացնել անհատական և խմբային հանդիպումներ՝ ուղղված ծնող-երեխա հարաբերությունների բարելավմանը, տարբեր տարիքային փուլերի առանձնահատկությունների վերլուծությանը, ճգնաժամերով պայմանավորված դժվարությունների, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների առջև ծառայած հոգեբանական խնդիրների հաղթահարմանը: Ձեռնարկի մյուս կարևոր առանձնահատկությունը վերոնշյալ խնդիրների հաղթահարման ընթացքում ծնողի հոգեվիճակի կարևորումն է: Եթե ծնողը հայտնվել է սթրեսային իրավիճակում, ունի կորստի, հուսահատության, անտարբերության զգացում, ինչի հետևանքով նրա մոտ նկատվում են անկայուն հուզական դրսևորումներ, նախ անհրաժեշտ է կարգավորել նրա հուզական վիճակը, այնուհետև իրականացնել հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանք:

Ձեռնարկում ներկայացված է նաև ծնողավարության հմտությունների զարգացմանը նպաստող թրեյնինգ, որն ուղեցույց կլինի նախադարձական, դպրոցական տարբեր հաստատություններում աշխատող ծնողների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելիս:

Այստեղ ներկայացված են նաև մասնագիտական փորձի հիման վրա մշակված տարատեսակ վարժություններ, մեթոդներ, հնարներ, հարցարաններ, որոնք թույլ կտան հոգեբաններին կազմակերպել լիարժեք, արդյունավետ աջակցություն, ինչպես երեխաների, այնպես էլ ծնողների հետ: Շեշտադրվում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ աշխատանքների կազմակերպումը, քանի որ այս խնդիրը հարարակության շրջանում դեռևս մնում է թիրախային:

Սույն ձեռնարկում ներկայացված են նաև ծնող-մասնագետ փոխհարաբերություններում առկա խնդիրներն ու վերջինիս հաղթահարման ուղիները, քանի որ ծնողավարությունն իր մեջ ներառում է ինչպես աշխատանք ծնողների հետ՝ պայմանավորված երեխայի դժվարություններով, այնպես էլ գործընթաց՝ ուղղված ծնողների հետ փոխվստահության, փոխհամագործակցության մթնոլորտի ստեղծմանը:

Այն նախատեսված է նախադպրոցական, կրտսեր և ավագ դպրոցական տարիքի երեխաների և նրանց ծնողների հետ աշխատող մասնագետների համար: Այն ուղեցույց է մանկապարտեզների, դպրոցների, ինչպես նաև սոցիալական հոգաձություն և ներառական կրթություն իրականացնող հաստատությունների մասնագետների համար: Ձեռնարկում զետեղված տեղեկատվությունը կարելի է կիրառել ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքներ իրականացնելիս:

Ծնող-երեխա, ծնող-մասնագետ փոխհարաբերություններում հաճախ հանդիպող դժվարությունները

Արդի իրականության մեջ ծնող-երեխա փոխհարաբերությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է: Այլ ժամանակաշրջանում դաստիարակված և մանկությունն ապրած մեծահասակները դժվարությամբ են ընդունում և հարմարվում նոր սերունդների վարք ու բարքին, տեխնիկական առաջխաղացումներին և այլն, ինչի հետևանքով առաջանում են անհամաձայնություններ, բախումներ, կոնֆլիկտային իրավիճակներ, մերժված, չսիրված լինելու զգացումներ և այլն: Վերոնշյալին ավելանում են նաև ծնողների և երեխաների ճգնաժամային դրսևորումները: «Լավ ծնողների մոտ մեծանում են լավ երեխաներ»․ բավականին հաճախ ենք օգտագործում այս արտահայտությունը՝ հաճախ դժվարանալով բացատրել, թե ինչ է նշանակում լինել «լավ ծնող»: Շատերը կարծում են, որ «լավ ծնող» կարելի է դառնալ՝ ուսումնասիրելով մասնագիտական գրականություն կամ տիրապետելով հատուկ մեթոդների: Սակայն միայն գիտելիքները բավարար չեն, անհրաժեշտ է ներքին ինտուիցիա, երեխային լսելու, ապրումակցելու ունակություն, բարենպաստ մթնոլորտ, գիտելիքները գործնականում կիրառելու և երեխայի անձնային առանձնահատկություններին հարմարեցնելու հմտություն: Ծնողավարության ընթացքում, ինչպես և այլ գործընթացներում, դժվար է զերծ մնալ սխալներից, սակայն մեկ այլ ծայրահեղության դեպքում, եթե ծնողը փորձում է անթերի իրականացնել ծնողական խնամքն ու պարտականությունները, կարող է խոչընդոտել երեխայի ինքնուրույն արարելու, փնտրելու, գտնելու և որոշում կայացնելու ունակության ձևավորմանը: Ընտանեկան փոխհարաբերություններում մեծ նշանակություն ունի նաև սիրո պահանջմունքի բավարարումը: Ծնողական սերը իր երեխայի նկատմամբ անսահման է և առանց պայմանի․ այն երեխայի հոգևոր և մարմնական առողջության հիմքն է:

Ծնողների և երեխաների ընդհարումների պատճառը հաճախ երեխաների ինքնուրույնության և անկախության ձգտումն է: Երեխաների այդ ձգտումը զուգորդվում է նրանց ֆիզիկական զարգացման հետ: Սակայն այդ ինքնուրույնության հետ համատեղ երեխաները շարունա-

կում են հուզականորեն սերտ կապի մեջ մնալ ծնողի հետ:

Առավել խնդրահարույց իրավիճակում են հայտնվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները, քանի որ նրանց մոտ հավելյալ ծագում են նաև երեխայի առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններ՝ երեխայի խնդրի ընդունում, բացասական հուզական ապրումների հաղթահարում, նրա խնդրին համապատասխան աջակցություն ցուցաբերում և այլն: Ծնող-երեխա փոխհարաբերությունների վատթարացմանը նպաստում են նաև շրջապատի կողմից չիմացության հետևանքով երեխայի խնդրին տրվող ոչ համարժեք արձագանքը, ծաղրանքը, երեխայի վարքային դրսևորումների բացասական մեկնաբանումները և այլն:

Երեխայի լիարժեք զարգացումը առաջին հերթին իրականանում է բարենպաստ և ներդաշնակ ընտանեկան միջավայրում: Իսկ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար այդ ներդաշնակ պայմաններն էլ ավելի են կարևորվում, քանի որ նրանք գերզգայուն են, նրբանկատ և հուզական: Հուզական հարաբերությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս հետազայում ուղղորդել ամուսնական և ներընտանեկան իրավիճակների դինամիկան և ծնող-երեխա փոխհարաբերությունների ձևավորման ընթացքը:

Ծնողավարության ընթացքում հաճախ հանդիպում են նաև խնդիրներ մասնագետ-ծնող փոխհարաբերություններում, ինչը կարող է խոչընդոտել արդյունավետ փոխհամագործակցության ծավալմանը: Երեխաների հետ աշխատող մասնագետները երբեմն չեն կողմնորոշվում՝ ինչպես շփվել հուսահատ կամ ագրեսիվ, անտարբեր կամ կասկածամիտ ծնողների հետ: Կարևորվում է նաև մասնագետի կողմից ծնողներին ապրումակցելու կարողության զարգացումը, ինչի թույլ արտահայտվածությունը հաճախ խոչընդոտում է ծնողի հետ կառուցողական հարաբերությունների ձևավորմանը:

Թերևս սրանք այն հիմնական դժվարություններն են, որոնք հանդիպում են ծնողավարության ընթացքում:

Ծնողի առաջին այցելությունը, խնդրի ձևակերպումը և աշխատանքի տեսակի որոշումը /խմբային և անհատական/

Ծնողն առաջին անգամ դիմում է մասնագետի օգնությանը, երբ երեխայի մոտ նկատում է անցանկալի հուզավարքային դրսևորումներ և ոչ այնքան կառուցողական շփում: Հաճախ նա երեխային դիտարկում է որպես առանձին միկրոաշխարհի, որն ասես անջատ է ընտանիքից, նրա անդամներից և ծնողներից: Տպավորություն է ստեղծվում, որ ծնողների վարքը, հուզական վիճակը, ընտանեկան մթնոլորտը փոխկապված չեն երեխայի հոգեբանական դժվարությունների հետ: Արհեստավարժ հոգեբանը երեխայի խնդիրների հաղթահարման գործում աստիճանաբար ներգրավում է ծնողներին՝ նպաստելով ծնող-երեխա համակարգում ծնողի դերի գիտակցման ու արժևորմանը: Իհարկե, ծնողներին պետք է հասցեագրել, որ նրանց մասնակցությունն անհրաժեշտ է ոչ թե այն պատճառով, որ նրանց մեղավորությամբ է երեխան հայտնվել նման իրավիճակում, այլ բացատրելով, որ ծնողը կազմում է երեխայի անբաժանելի մասը, և նրանից լավ ոչ ոք չի կարող հասկանալ և զգալ երեխայի ապրումները: Առաջին հանդիպման ընթացքում պետք է հասկանալ ծնողի այցի նպատակը, ձևակերպել աշխատանքի խնդիրները, պլանավորել աջակցության բնույթը և անհրաժեշտության դեպքում սահմանել ծնողի մասնակցության ձևը՝ անհատական կամ խմբային հանդիպումների տեսքով: Առաջին հանդիպման ընթացքում շատ կարևոր է ստեղծել ջերմ, փոխվստահության մթնոլորտ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքները տարբերվում են իրենց ինքնատիպությամբ, քանի որ այդ ծնողներին բնորոշ է հուզական լարվածությունը, երեխայի խնդիրը ընդունելու և իրավիճակի հետ հարմարվելու ակնհայտ դժվարությունները: Ծնողներն իրենց զգում են փակուղում, անելանելի իրավիճակում. նրանց անդադար տանջում է այն միտքը, որ իրենք ոչինչ չեն կարող փոխել, որ իրենց երեխան դատապարտված է «հիվանդ երեխա» կոչվելու դատավճռին: Ուստի հաճախ ծնողը հերքում է խնդրի առկայությունը, հրաժարվում է ընդունել այն, հետաձգում է երեխային աջակցելու գործընթացն այնքան

ժամանակ, մինչ կրկին կհայտնվի այդ խնդիրը հրահրող իրավիճակում: Նման հետաձգումները կարող են բացասաբար անդրադառնալ երեխայի հետագա զարգացման վրա, քանի որ ուսուցման և զարգացման համար առավել բարենպաստ տարիքային փուլը /2-4 տարեկան/ անտեսելու դեպքում հետևանքները կարող են լինել անդառնալի: Մեկ այլ դեպքում ծնողը հայտնվում է ապատիկ, դեպրեսիվ հոգեվիճակում, հուսահատվում է և դառնում անգործունյա: Ուստի առաջին հանդիպումից սկսած՝ պետք է աշխատել ծնողի հուզական դրսևորումների հետ՝ ընդգծելով այն միտքը, որ յուրաքանչյուր իրավիճակից կա ելք, որ երեխայի զարգացման ընթացքը պայմանավորված է ծնող-մասնագետ արդյունավետ համագործակցությամբ: Մասնագետը ծնողի սպասումները պետք է ուղղորդի ոչ թե աշխատանքի արդյունքի, այլ ընթացքի վրա: Ցանկալի է շեշտադրել նաև, որ երեխայի ձեռքբերումները ոչ թե պետք է համեմատել հասակակիցների հաջողությունների, այլ հենց երեխայի զարգացման աստիճանի և ներկայիս փոփոխությունների հետ: Անհրաժեշտ է ծնողին սովորեցնել երեխայի առջև դնել փոքր, իր հնարավորություններին համապատասխան նպատակներ և ուրախանալ նույնիսկ փոքր ձեռքբերումով՝ ձգտելով նոր հաջողությունների և առաջխաղացումների: Ծնողի հետ աշխատելիս ցանկալի է խուսափել անհասկանալի, վախ ներշնչող ախտորոշումներից՝ փորձելով նկարագրել այդ ախտորոշման արտահայտչաձևերը, հուզավարքային դրսևորումները, իմացական ոլորտում առկա դժվարությունները, շփման խնդիրները, ֆիզիոլոգական և մարմնական ոչ ստանդարտ արտահայտումները /օրինակ՝ «Աուտիզմ» ախտորոշումը բարձրաձայնելու փոխարեն, կարելի է ասել, որ երեխային բնորոշ են ինքնատիպ հուզական դրսևորումներ. նա դժվարանում է արտահայտել իր հույզերը, հաճախ զայրանում է, կարող է չնչին պատճառի դեպքում բղավել, երբեմն նրան հաճելի է, երբ գրկում ես, իսկ երբեմն էլ կարող է զայրանալ մարմնական հպումից, խուսափում է հայտնվել մարդկանց միջավայրում, և այլն/:

Ծնողներին ուղղված նմանատիպ մոտեցումը կձևավորի ծնող-մասնագետ բարենպաստ, վստահելի փոխհարաբերություններ, ինչը կօգնի մասնագետին առավել արդյունավետ իրականացնել աշխատանքը: Ծնողի հետ աշխատանքի ընթացքում շատ կարևոր է ապրումակցումը /էմպատիան/:

Նա պետք է զգա, որ հասկացված է մասնագետի կողմից, և վերջինս կարողանում է մտնել իր դրության մեջ: Այս դեպքում հոգեբանը ծնողի համար դառնում է հայելի, որտեղ արտացոլվում են իր հույզերը, ապրումները, դժվարություններն ու խնդիրները:

Այցելուի հետ առաջին հանդիպման խնդիրներն են՝ կոնտակտի հաստատումը, այցի նպատակի բացահայտումը և հետագա աշխատանքային քայլերի պլանավորումը: Ցանկալի է, որ ծնողն առաջին հանդիպմանը ներկայանա առանց երեխայի: Գոյություն ունեն առաջին հանդիպման իրականացման երեք հիմնական ձևեր՝ *կառուցվածքային, ոչ կառուցվածքային և կիսակառուցվածքային*:

Կառուցվածքային ձևն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Այս տարբերակն արդյունավետ է ինֆորմացիա հավաքագրելիս:

Ոչ կառուցվածքային ձևը հիմնականում կիրառվում է հոգեբանական խորհրդատվության և հոգեթերապիայի ժամանակ. այն գլխավորապես ուղղված է հարաբերությունների ստեղծմանը և ոչ այնքան ինֆորմացիայի հավաքագրմանը:

Կիսակառուցվածքային ձևը կարևորում է թե՛ ինֆորմացիայի հավաքագրումը և թե՛ փոխհարաբերությունների ստեղծումը:

Կառուցվածքային ձևը նպատակահարմար է կիրառել կարճ ժամանակահատվածում առավելագույն ինֆորմացիա ստանալու համար: Եթե մասնագետը վստահ է, որ ծնողի հետ աշխատանքը չի կրելու կայուն բնույթ, ապա առավել արդյունավետ է կիրառել կառուցվածքային ձևը: Երեխայի հետ շարունակական աշխատանքի պլանավորման դեպքում կարևորվում է և՛ ինֆորմացիա հավաքագրումը, և՛ ծնող-մասնագետ փոխվստահության մթնոլորտի ստեղծումը: Այդ դեպքում նպատակահարմար է կիրառել առաջին հանդիպման կիսակառուցվածքային մոդելը:

Երեխայի խնդրի մասին անհրաժեշտ ինֆորմացիա ստանալու համար առաջարկվում է ծնողների մասնակցությամբ իրականացնել անամնեստիկ տվյալների հավաքագրում՝ ըստ ստորև ներկայացված հարցաթերթի:

Անամենստիկ տվյալների հավաքագրում

Ինչպե՞ս է ընթացել հղիությունը:

Ինչպե՞ս է ընթացել ծննդաբերությունը: _____

Ինչպե՞ս է ընթացել երեխայի զարգացումը մինչև մեկ տարեկանը (ունեցե՞լ է արդյոք քնի խանգարումներ, նյարդային դրսևորումներ, կրթ է նստել, կրթ է սկսվել թոթովանքի շրջանը...):

Ո՞ր տարիքից է երեխան սկսել քայլել, խոսել:

Կատարում է արդյոք երեխան Ձեր կողմից տրվող հրահանգները: _____

Կարողանում է արդյոք երեխան մտապահել և վերարտադրել ինֆորմացիան տարիքին համապատասխան:

Որքան երկար է կարողանում կենտրոնացնել ուշադրությունը: _____

Առկա՞ են արդյոք երեխայի մոտ վախեր (մթությունից, կենդանիներից, միջատներից, միայնակ մնալուց և այլն):

Դիտվո՞ւմ են արդյոք երեխայի մոտ վարքային ոչ ադեկվատ դրսևորումներ (ագրեսիվություն, ինքնամփոփություն և այլն):

Ինչպիսի փոխհարաբերություններ ունի երեխան ընտանիքի անդամների հետ (հայր, մայր, քույր, եղբայր, տատիկ, պապիկ այլն):

Ինչպիսի փոխհարաբերություններ ունի երեխան հասակակիցների հետ: _____

Ինչպիսի փոխհարաբերություններ ունի երեխան մեծահասակների հետ: _____

Առկա է արդյոք երեխայի մոտ գիշերամիզություն (կամ էնկոպրեզ) եթե այո, ապա կան ընտանիքի անդամներ, որոնք ունեցել են նմանատիպ խնդիրներ: _____

Ո՞րն է Ձեզ անհանգստացնող խնդիրը, երբ եք այն նկատել, ինչպե՞ս է այն արտահայտվում:

Մասնակիցների ընտրությունն ու խմբային աշխատանքների իրականացումը

Մինչ խմբային աշխատանքների իրականացումը, կարևոր է խմբի անդամների նպատակային հավաքագրումը: Յուրաքանչյուր թրեյնինգ ունի իր նպատակը, համապատասխան թեման և թեմայով պայմանավորված խնդիրների հաղթահարման ուղղվածությունը: Ուստի մասնակիցների խնդիրներն էլ պետք է կրեն նույնատիպ բնույթ: Եթե թրեյնինգն ուղղված է ծնողավարության հմտությունների զարգացմանը, ապա մասնագետը պետք է ընտրի այնպիսի մասնակիցների, որոնք ունեն երեխայի դաստիարակությանն առնչվող խնդիրներ, երեխայի խնդիրները ընդունելու և հաղթահարելու դժվարություններ: Տրամաբանական է, որ այս խմբում չենք կարող ընդգրկել ասենք՝ հարբեցող, աշխատավայրում շփման խնդիրներ ունեցող կամ կորստի զգացում և ներանձնային խնդիրներ ունեցող ծնողի և այլն: Խմբի մասնակիցները կարող են ընտրվել ըստ երեխաների տարիքային խմբերի և խնդրի բնույթի (ագրեսիվ երեխաների ծնողներ, վախեր և ֆոբիաներ ունեցող երեխաների ծնողներ կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, վարքային արտահայտված խնդիրներ ունեցող երեխաների, շփման-հաղորդակցման խնդիրներ ունեցող երեխաների ծնողներ և այլն): Խմբի մասնակիցների ոչ ճիշտ ընտրության հետևանքով հանդիպումները կարող են ծանծրալի ու անհետաքրքիր լինել ծնողների համար, հետևաբար նաև՝ անարդյունավետ: Անհատական հանդիպումներից հետո մասնագետը հստակ պատկերացում կարող է կազմել՝ համապատասխանում են արդյոք տվյալ ծնողի հետաքրքրությունները թրեյնինգի նպատակներին և խնդիրներին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մասնագետների աշխատանքային արդյունավետությունը բարելավելու նպատակով առաջարկվում է իրականացնել ծնողավարության հմտությունները զարգացնող հետևյալ թրեյնինգը, որն ունի իր հստակ ընթացակարգը և ընդգրկում է 16 հանդիպում:

Ծնողավարության հմտությունները զարգացնող թրեյնինգ մասնագետների համար

Հանդիպումների քանակը՝ 16
Տևողությունը՝ 32 ժամ

Թրեյնինգի նպատակը ծնողների հետ աշխատող մասնագետների ծնողավարության հմտությունների զարգացումն է, որը հնարավորություն կտա նրանց ծնողի հետ միասին հաղթահարել ծնող-երեխա և մասնագետ-ծնող փոխհարաբերություններում առկա դժվարությունները և կնպաստի մասնագիտական որակների բարելավմանը:

Խնդիրները՝

- երեխայի տարիքային առանձնահատկությունների և ճգնաժամերի լուսաբանում ծնող-երեխա փոխհարաբերությունների համատեքստում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների առանձնահատկությունների և առկա դժվարությունների քննարկում և վերլուծություն,
- մասնագետ-ծնող փոխհարաբերություններում ծնողի անձնային տիպի վերլուծություն,
- մասնագիտական հմտությունների ձևավորում ծնող-երեխա, մասնագետ-ծնող փոխհարաբերություններում ծառայած խնդիրները հաղթահարելու նպատակով:

Թրեյնինգավարը կազմակերպում և իրականացնում է տասնվեց, միմյանց հետ փոխկապակցված հանդիպումների շարք՝ 32 ժամ տևողությամբ:

Թրեյնինգի ընթացքում մասնակիցները նստում են շրջանաձև տեղադրված աթոռներին. դա հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել հանդիպումները:

Հանդիպում առաջին

1. Ողջույնի խոսք, ծանոթություն
2. Վարժության իրականացում
3. Խմբային կանոնների մշակում
4. Նպատակների և սպասելիքների քննարկում
5. «Ծնողական շարադրություններ» մեթոդիկայի կիրառում
6. Ամփոփում

Ողջույնի խոսք, ծանոթություն:

Վարողը ողջունում է մասնակիցներին և ծանոթանում նրանց հետ: Ծանոթանալիս կարելի է օգտագործել տարատեսակ վարժություններ, որոնք իրենց մեջ կներառեն ոչ միայն ծանոթության գործընթացը, այլև միմյանց նկատմամբ փոխվստահության, համախմբվածության և միասնականության մթնոլորտի ստեղծումը:

Վարժության իրականացում:

Վարողը թելի կծիկը գցում է մասնակիցներից որևէ մեկին՝ բռնելով թելի ծայրը: Այդ մասնակիցը իր հերթին կատարում է նույն գործողությունը: Գործողությունը կրկնվում է այդպես շարունակ, մինչև վերջին մասնակիցը: Վարժությունը ճիշտ կատարելու դեպքում թելից ստացվում է սարդոստայն: Այնուհետև վարողը շեշտադրում է խմբի ամբողջականության կարևորությունը, թե ինչպես խումբը թրեյնինգի ընթացքում կապված կլինի այդ անտեսանելի թելերով, որը կնպաստի աշխատանքի արդյունավետությանը:

Խմբային կանոնների մշակում:

Յուրաքանչյուր թրեյնինգ իրականացնելուց առաջ անհրաժեշտ է որոշել խմբային կանոնները, ինչը կնպաստի խմբում կարգուկանոնի, միմյանց լսելու, հարգելու, հանդիպումից չուշանալու սովորույթի ձևավորմանը: Դրանք մշակվում են խմբի անդամների և մասնագետի առաջարկությամբ: Խմբի կանոնները ցանկալի է ֆիքսել տեսանելի ձևով / գրատախտակի, վատմանի և այլնի վրա/, քանի որ դրանք այդուհետ պետք է կազմեն թրեյնինգի անբաժանելի մասը: Խմբի կանոնների խախտումների դեպքում վարողը կարող է պատժամիջոցներ կիրառել խմբի անդամների համաձայնությամբ՝ նրանց կամ վարողի կողմից առաջարկված տարբերակներով:

Նպատակների և սպասելիքների քննարկում:

Վարողը կարող է նպատակների և սպասելիքների գրառումն իրականացնել երկու տարբերակով: Առաջին տարբերակում թրեյնինգավարը մասնակիցներին բաժանում է հարցաթերթիկ, որտեղ նրանք նշում են մասնակցության նպատակներն ու սպասելիքները:

Հարցաթերթիկ

Ինչ նպատակով եք մասնակցում այս թրեյնինգին: _____

Ինչ սպասելիքներ ունեք այս թրեյնինգից: _____

Ձեր առաջարկությունները և ցանկությունները՝ կապված թրեյնինգի ընթացքի հետ: _____

Մյուս տարբերակում վարողը խմբի մասնակիցների հետ միասին քննարկում է թրեյնինգին մասնակցելու նպատակները և սպասելիքները՝ գրանցելով դրանք հատուկ նշումների համար նախատեսված գրատախտակի վրա, ինչը թույլ կտա թրեյնինգի վերջում ամփոփել սպա-

սումների իրականացման աստիճանը և արդյունքները:

Հարցաթերթիկները կամ ընդհանուր գրառումները մասնագետին հնարավորություն կտան ևս մեկ անգամ պատկերացում կազմել, թե ինչ խնդիրներով են դիմել ծնողները, ինչ սպասելիքներ և նպատակներ ունեն:

«Ծնողական շարադրություններ» մեթոդիկայի կիրառում /հեղինակ Վ.Վ. Ստոլին, Ա.Ի. Տաշևա/:

Վարողը մասնակիցների սպասելիքները վերհանելուց հետո առաջարկում է կիրառել «Ծնողական շարադրություններ» մեթոդիկան, որի շնորհիվ մասնագետը համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարող է տեղեկատվություն ստանալ ծնողի կողմից երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, սպասումների և երեխայի խնդրով պայմանավորված դժվարությունների մասին:

Հրահանգ:

«Հարգելի՛ ծնողներ, խնդրում ենք գրել Ձեր երեխայի մասին շարադրություն. անհրաժեշտ է առավել բովանդակալից, անկաշկանդ պատմել Ձեր երեխայի մասին»:

Շարադրության մեկնաբանություն:

Շարադրությունները մշակվում են որակական վերլուծության մեթոդով: Սովորաբար շարադրության ծավալը չի գերազանցում 30 նախադասությունը, որքան մեծ է շարադրության ծավալը, այնքան մեծանում են պրոյեկցիոն հնարավորությունները: Եթե պատմության ծավալը շատ փոքր է, ապա ծնողի՝ մասնագետին դիմելու պատճառը հավանաբար երեխան չէ: Շարադրության բովանդակությունը սերտորեն կապված է մասնագետին դիմելու խնդրի հետ: Հոգեբանը պետք է նշումներ կատարի մի քանի կարևոր կետերի վերաբերյալ.

- Որքան ժամանակ է ծնողը տրամադրում շարադրություն գրելուն (կարճ, երկար, հնարավորությունների սահմանում նշել, թե հատկապես որ հատվածում է երկար կանգ առնում):
- Որ ժամանակաձևով է գրված շարադրության այս կամ այն հատվածը. հնարավոր է կիրառված լինեն տարբեր ժամանակաձևերը: Սա ևս մասնագետին տալիս է ինֆորմացիա ծնողի համար խնդրի արդիականության մասին (օրինակ, եթե ծնողը խնդիրը ներկայաց-

նում է անցյալ ժամանակով, ապա տվյալ խնդիրը, ներկա պահին, արդիական չէ):

- Ինչպիսին է շարադրության բովանդակությունը: Շարադրության բովանդակությունը, հատկապես տվյալների շարադրման ժամանակ, ունի մեծ նշանակություն. այն տեղեկացնում է նաև հոգեբանի նկատմամբ ծնողի վերաբերմունքի, մասնագետ-ծնող փոխհարաբերությունների մասին: Եթե ծնողը շարադրությունը ներկայացրել է կարճ, կոնկրետ, աղքատիկ, ապա հնարավոր է, որ նա դեռևս չի վստահում մասնագետին կամ գտնվում է շատ լարված, տագնապային վիճակում:

Բովանդակությունը կարող է ունենալ արդարացման միտում: Նման շարադրանքի առկայության դեպքում կարելի է եզրակացնել, որ ծնողը մեղքի զգացում ունի երեխայի նկատմամբ, ինչի պատճառով փորձում է արդարանալ: Այսպիսով, շարադրանքի գրելաձևը, բովանդակությունը ակնառու ներկայացնում են ծնողի մտավախությունները, խնդիրները, դժվարությունները և մեծ ինֆորմացիա են տալիս երեխա-ծնող փոխհարաբերությունների մասին:

Ծնողական հարաբերությունների որակական վերլուծությունը իրականացվում է ըստ հետևյալ երեք բաղադրիչների՝ *համակրանք-հակակրանք, մտերմություն-օտարացում, հարգալից-անհարգալից վերաբերմունք*.

1. *Համակրանքի* դեպքում ծնողը շարադրության մեջ հրճվում է իր երեխայի առանձնահատկություններով, նրան գոհացնում է երեխայի յուրաքանչյուր արարք, դրական է տրամադրված նրա հանդեպ: Այս դեպքում ծնողը շարադրանքի ընթացքում հաճախ է օգտագործում երեխայի անունը, ծնողի կողմից ընթացքում հնչում են գովասանքի խոսքեր, շարադրանքը հագեցած է լինում հուզականությամբ, փառաբանական արտահայտություններով, արդարացվում են երեխայի նույնիսկ ոչ ցանկալի վարքային դրսևորումները, հուզական արտահայտումները:

Հակակրանքի դեպքում ընդգծվում են երեխայի բացասական կողմերը՝ արտաքինի հետ կապված թերությունները, վարքի ոչ ցանկալի դրսևորումները, հույզերի ոչ կառուցողական արտահայտումները /

առկա է սուբյեկտիվ վերաբերմունք/, ծնողը բացասական վերաբերմունք է ցուցաբերում երեխայի անձի, մտքերի, զգացմունքների, հետաքրքրությունների, զբաղմունքների նկատմամբ, բովանդակության մեջ նկատվում է զայրույթ, դժգոհություն, մեղադրանք:

2. *Հարգալից վերաբերմունքի* դեպքում ծնողը շեշտադրում է երեխայի ինտելեկտուալ բարձր հնարավորությունները, ընդգծում արժանիքները, դրսևորում է հարգալից վերաբերմունք երեխայի զգացմունքների և հետաքրքրությունների նկատմամբ, մատնանշում հասարակության կողմից երեխայի ընդունված լինելը, իսկ *անհարգալից վերաբերմունքի* դեպքում՝ բացառում է երեխայի ընդունակությունների, ինտելեկտի բարձր կամ միջին մակարդակի առկայությունը, հաջողությունների հասնելու հավանականությունը, անտեսում է երեխայի իրավունքները, թերահավատություն է դրսևորում երեխայի հարմարողական հնարավորությունների նկատմամբ /թույլ է, չի հարմարվում ոչ մի միջավայրում, ինքնուրույն չէ, շփվող չէ, շատ «դմբո է» և այլն/, ընդգծում է հասարակության կողմից երեխայի մերժվածությունը:
3. *Միջերմություն*, հարազատության ցուցադրում: Ծնողը շարադրության բովանդակության մեջ շեշտադրում է մեկ ամբողջության գաղափար՝ կիրառելով նմանատիպ բառեր և արտահայտություններ՝ «մենք.... մերը.... միասին.....իրար հետ.....» և այլն: Նա բավականին տեղեկացված է երեխայի մասին, մանրամասն ներկայացնում է անձնային առանձնահատկությունները, մտքերը, զգացմունքները, հետաքրքրությունները, սիրած գրքերը, ֆիլմերը, երաժշտությունը և այլն, կիրառում է ուղիղ խոսք, նկատվում է անհանգստություն երեխայի ներկայի և ապագայի նկատմամբ: Երեխային նկարագրելիս անչափ զգացմունքային է, ընդունում է երեխայի թերություններն ու առանձնահատկությունները՝ հաճախ արդարացնելով դրանք, անտեսում է երեխայի հասցեին հնչած շրջապատի կարծիքները:
4. *Օգտարացումը* ուղեկցվում է ծնողի կողմից երեխայի առանձնահատկությունների անտեսմամբ, նրա մասին տեղեկատվության բացակայությամբ, օրինակ՝ չգիտի, թե ովքեր են երեխայի ընկերները, ինչ հետաքրքրություններ նա ունի, ինչպիսի ապրումներ և զգացմունք-

ներ է դրսևորում, ինչպիսի խնդիրների և դժվարությունների հետ է բախվում և այլն: Այս դեպքում ծնողը շեշտադրում է շրջապատող մարդկանց կարծիքների առաջնայնությունը՝ համապատասխանացնելով երեխայի առօրյան, ապրելակերպը այդ կարծիքներին, օրինակ՝ կիրառում է նման արտահայտություններ՝ «...դե ուսուցիչը ասում է, որ նա լիարժեք չի կարողանում դասը պատրաստել, հարևանները ասում են, որ նա ուշ է գալիս բակից տուն, դրսում երկար է խաղում....., ծանոթս ասում է, որ իր երեխան մանկապարտեզում ավելի շուտ է նյութը ընկալում, քան իմը.....» և այլն/: Օտարացմանը բնորոշ է նաև «մենք»-ի զգացումի թույլ արտահայտվածությունը, երեխայի անունը չկիրառելու կողմնորոշումը, երեխայի առանձնահատկությունների ֆորմալ, պաշտոնական նկարագրությունը, բնութագրի դասակարգված ներկայացումը (օրինակ՝ հատկանիշների համարակալված ներկայացումը կամ գրքային, արհեստական, ոչ հարազատ նկարագրությունը) երեխայի անձնական կյանքի անտարբեր ներկայացումը:

Շարադրությունները ավարտելուց հետո մասնակիցներին առաջարկվում է փորձել, ըստ ցանկության, քննարկել և մեկնաբանել որևէ շարադրություն: Հնարավոր է, որ մասնակիցներից ոչ ոք չցանկանա քննարկել իր շարադրությունը, այդ պարագայում, ցանկալի է, որ վարողը նախօրոք պատրաստի երկու շարադրություն՝ մեկը՝ դրական, մյուսը բացասական բնութագրությամբ:

Ամփոփում:

Յուրաքանչյուր հանդիպման ավարտին ցանկալի է հակիրճ ամփոփել օրվա ընթացքում իրականացված աշխատանքը:

Հանդիպում երկրորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. 3 տարեկանի ճգնաժամի լուսաբանում
4. Գործնական խորհուրդներ
5. Վարժությունների իրականացում, դեպքերի քննարկում
6. Ամփոփում

Ողջույնի խոսք:

Մասնագետը ողջունում է մասնակիցներին, անդրադառնում է մասնակիցների տրամադրությանը, նշում է, որ շատ ուրախ է կրկին նրանց տեսնելու համար: Եթե մասնակիցները ուշանում են, ապա ցանկալի է վերհիշել խմբի կանոնները, պատժամիջոցները:

Անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Հոգեբանը դիմում է խմբին և առաջարկում վերհիշել նախորդ հանդիպման բովանդակությունը՝ քննարկելով նրա կարևոր կողմերը: Նշանակալի տեղեկատվության բացթողման դեպքում անհրաժեշտ է լրացնել այն: Այնուհետև մասնագետը առաջարկում է մասնակիցներից որևէ մեկին ներկայացնել մի դեպք, երբ 3 տարեկան երեխան ցուցաբերել է այնպիսի վարքագիծ, որը չի գոհացրել ծնողին: Ծնողը իր հերթին արձագանքել է, սակայն այդ արձագանքը անարդյունավետ է եղել և չի նպաստել վարքագծի փոփոխությանը, ինչն էլ հրահրել է կոնֆլիկտային իրավիճակ: Հաջորդիվ՝ վարողը առաջարկում է իրականացնել քննարկում, մասնակիցները ներկայացնում են կոնֆլիկտի հաղթահարման տարբերակներ և հնարավոր լուծումներ:

3 տարեկանի ճգնաժամի լուսաբանում:

Վարողը լուսաբանում է 3 տարեկանի ճգնաժամը՝ նշելով, որ մինչ 3 տարեկանը երեխան սիմբիոտիկ կապի մեջ է գտնվում մոր հետ, իսկ 3 տարեկանին մոտ նա սկսում է հասկանալ, որ ինքնուրույն, առանց մեծահասակի օգնության կարող է ինչ-որ բան անել, ազդել առարկաների վրա և փոփոխել դրանք: Երեխան, առանձնանալով մեծահասակներից, սկսում է նրանց հետ նոր, առավել խորքային հարաբերություններ կառուցել: Այս տարիքային շրջանում է ձևավորվում երեխայի ինքնագիտակցությունը, «ես» կերպարը. դա է պատճառը, որ նրանք սկսում

են հաճախ կիրառել «ես» դերանունը: 3 տարեկանի ճգնաժամը պայմանավորված է ինքնուրույնության դրսևորումներով: Երեխան, կարծես անակնկալի գալով, որ ինքն առանձին էակ է, ցանկանում է այդ ենթադրությունը հաստատող քայլեր կատարել և հաճախ է կրկնում «ես ինքս» արտահայտությունը՝ «ես ինքս կուտեմ», «ես ինքս կհագնեմ», «ես ձեռքդ չեմ բռնի», «ես սա չեմ ուզում, դա եմ ուզում» և այլն: Ծնողների կողմից հաճախ դա ընկալվում է որպես չենթարկվելու միտում՝ համարելով, որ նա դեռ փոքր է և պետք է անվերապահորեն կատարի այն, ինչ ասվում է իրեն: Նման վարքագծի արտահայտման համար երեխան ոչ հազվադեպ պատժվում է, ինչի հետևանքով էլ կամակորություններ է դրսևորում, չի ենթարկվում, հակադրվում է նրանց, դառնում ագրեսիվ՝ հայտնվելով ճգնաժամային իրավիճակում: Մեկ այլ դեպքում ծնողները սահմանափակում են երեխայի ինքնուրույնությունը անվտանգության կանոնները պահպանելու նպատակով, ինչը նույնպես նպաստում է հակադրվող վարքի դրսևորմանը: Երեխան ցանկանում է հաստատել իր «ես»-ը, ինչը դրական ձգտում է, սակայն հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով այդ ընթացքն ուղեկցվում է անցանկալի դրսևորումներով (երեխան բղավում է, կամակորություններ է անում, լաց է լինում, կծում է և այլն): Այս շրջանում բավականին դժվար է երեխայի կամքին հակառակ որոշումներ կայացնել: Երեխան պետք է գիտակցի, որ այն, ինչ անում են իր հետ, դա իր որոշումն է, այդպես ինքն է ցանկանում: Հաճախ մեծահասակների նմանատիպ մոտեցումը կարող է մեղմել ճգնաժամը: Այս տարիքում երեխայի համար կարևորվում են մեծահասակների կողմից իր արարքներին տրվող գնահատականները: Նա ձգտում է, որ իր և ծնողի միջև լինի իրավունքների հավասարություն:

Գործնական խորհուրդներ

- Ցանկալի չէ կենտրոնացնել ուշադրությունը երեխայի ոչ ցանկալի վարքի վրա, առավել ևս՝ փորձել ստիպողաբար շտկել այն, հակառակ դեպքում նմանատիպ վարքագիծը կամրապնդվի և կկրկնվի՝ ցանկություններին հասնելու նպատակով: Այս պարագայում կարելի է շեղել երեխայի ուշադրությունը, կամ գրկել և հեռացնել այդ վարքը առաջացնող միջավայրից:

- Ցանկալի չէ քննարկել և վիճել երեխայի հետ, եթե նա գտնվում է հուզական ոչ կայուն վիճակում, նախընտրելի է սպասել մինչև հանգստանա, ապա քննարկել «վատ» արարքը: Անկախ երեխայի արտահայտած վարքագծից՝ ծնողը պետք է փորձի հանգիստ լինել: Տեսնելով ծնողի հանգստությունը՝ երեխան ակամայից կրկնօրինակում է նրա վարքը: Երբ երեխան արդեն գտնվում է հանգիստ վիճակում, անհրաժեշտ է նշել, թե որքան շատ է ծնողը սիրում նրան, թեպետ չի ենթարկվելու նրա կամակորոթություններին:
- Երեխայի հետ խոսելիս անհրաժեշտ է խուսափել նրա կողմից «ոչ» պատասխանը ենթադրող իրավիճակներից, ցանկալի է երեխային տալ ընտրության հնարավորություն: Օրինակ՝ «հագնվի՛ր, գնանք բակ» նախադասության փոխարեն կարելի է առաջարկել՝ «ցանկանում ես գնալ բակ՝ զբոսնելու, թե՞ այգի՝ խաղալու»:
- Անհրաժեշտ է խրախուսել երեխայի դրական վարքագիծը՝ ամրապնդելով այն: Օրինակ՝ «Ապրե՛ս, Արմինե՛, դու կարողանում ես հավաքել քո խաղալիքները, կեցցեն»:
- Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս ճգնաժամը կրում է ժամանակավոր բնույթ և պետք է համբերատար սպասել, մինչև այն ավարտվի: Այս շրջանի համար կարելի է հիշել «համբերություն, համբերություն և միայն համբերություն» կարգախոսը:

Վարժությունների իրականացում, դեպքերի քննարկում:

Ճգնաժամային փուլի առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո մասնակիցները բաժանվում են երկու խմբի: Վարողը ներկայացնում է մեկական դեպք, որպեսզի խմբերը, կիրառելով տրամադրված ինֆորմացիան, փորձեն արդյունավետ լուծումներ առաջարկել խնդրահարույց իրավիճակներում:

Իրավիճակ 1

Երեխան 3 տարեկան է, ապրում է մայրիկի, հայրիկի, տատիկի և պապիկի հետ: Նա շատ զգայուն է, դյուրագրգիռ, ինքնասածի, հաճախ դրսևորում է կամակորոթյուններ: Մանկապարտեզից վերադառնալիս երեխան ցանկանում է, որ տատիկն իր համար քաղցրավենիք գնի, պառկում է հատակին, հարվածում ձեռքերով և ոտքերով, ինչից հետո տատիկը բավարարում է նրա ցանկությունը: Մայրիկը հազվադեպ է վերցնում երեխային մանկապարտեզից, քանի որ աշխատում է: Մի օր նա գալիս է մանկապարտեզ՝ մոռանալով դրամապանակը: Տուն վերադառնալիս խանութի կողքով անցնելիս երեխան կրկին քաղցրավենիք է ցանկանում. դրամ չունենալու պատճառով մայրիկը հրաժարվում է գնել այն, և երեխան կրկին ցուցաբերում է հակադրվող վարքագիծ:

Իրավիճակ 2

Երեխան 3,5 տարեկան է, սկսել է հաճախել մանկապարտեզ, տհաճությամբ է գնում այնտեղ, դարձել է շատ կամակոր, թեպետ մինչ այդ եղել է հանգիստ, ենթարկվող և հավասարակշռված: Դաստիարակը գանգատվում է, որ երեխան շատ «ագրեսիվ է», կծում է երեխաներին, անդադար լաց է լինում: Տանը դարձել է չափազանց կամակոր, նեղացնում է 1,5 տարեկան քույրիկին, իսկ նախկինում նուրբ էր և հոգատար քրոջ նկատմամբ:

Վարողը մասնակիցների հետ միասին քննարկում է նշված դեպքերը, վերլուծում տարբեր մոտեցումներ, վեր հանում բացթողումներն ու ուրվագծում խնդրի հաղթահարման ուղիները:

Նշված վարժությունից հետո թրեյնինգավարը առաջարկում է իրականացնել նաև մեկ այլ վարժություն՝ ուղղված ծնողների էմպատիկ ունակությունների զարգացմանը:

Ծնողների ապրումակցման ունակությունը զարգացնելու նպատակով վարողը մասնակիցների հետ միասին իրականացնում է ճգնաժամում գտնվող երեխայի առանձնահատկությունների վերլուծություն՝ ներկայացնելով հետևյալ նկարը՝



Մասնագետը մասնակիցներին հղում է հետևյալ հարցերը՝ «Ձեր կարծիքով ինչպե՞ս է զգում իրեն նկարում պատկերված երեխան», «Ինչպիսի՞ իրավիճակում է նա հայտնվել», «Ինչպիսի՞ ելք կունենա տվյալ իրավիճակը», «Ինչպե՞ս կվարվեիք դուք այդ իրավիճակում», որից հետո ծավալվում է քննարկում:

Հանդիպման ամփոփում: Դեպքերի քննարկմանը հաջորդում է հանդիպման ամփոփումը:

Հանդիպում երրորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Ակտիվացնող վարժության իրականացում
4. Ծնող-երեխա փոխհարաբերությունների տարբեր կողմերի ներկայացում
5. Հետհայացք դեպի մանկություն
6. Առաջադրանք
7. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Ողջույնի խոսքից և նախորդ հանդիպման անդրադարձից հետո վարողը ներկայացնում է, թե ինչ է տրամադրությունը, ինչպես է այն արտահայտվում և որքան կարևոր է ծնողի տրամադրությունը երեխայի լիարժեք, առողջ զարգացման համար:

Ակտիվացնող վարժության իրականացում:

Վարողը իրականացնում է ակտիվացնող և տրամադրության դրական ֆոնը ապահովող վարժություն:

Թրեյնինգավարը մասնակիցներից յուրաքանչյուրին ասում է թիվ, որը նա պետք է մտապահի /1, 2, 3, 4 և այլն/: Այնուհետև վարողը երկու անգամ կրկնում է իր թիվը, օրինակ՝ 1, 1, և երկու անգամ ծափ է տալիս, հաջորդիվ՝ առաջին անգամ ասում է իր, իսկ երկրորդ անգամ՝ մեկ այլ մասնակցի թիվը՝ օրինակ 1, 3: Այն մասնակիցը, որին պատկանում է ասված թիվը՝ 3-ը, երկու ծափից հետո ստանձնում է վարողի դերը՝ երկու անգամ արտասանելով իր թիվը՝ 3, 3, և կրկին երկու անգամ ծափ տալով: Վարողը մի քանի անգամ կարող է կրկնել իր թիվը՝ 3, 3, ծափ-ծափ, 3, 3, ծափ-ծափ, 3, 3, ծափ-ծափ, այնուհետև անսպասելիորեն ասել մեկ այլ մասնակցի թիվը՝ 3, 8, ծափ-ծափ: Մասնակիցները պետք է լինեն շատ ուշադիր, որպեսզի, լսելով իրենց թիվը, ծափերից անմիջապես հետո ստանձնեն վարողի դերը՝ 8, 8, ծափ-ծափ: Խաղն առավել հետաքրքիր դարձնելու համար կարելի է արագացնել թիվ ասելու և ծափ տալու հաճախականությունը: Այն մասնակիցը, որը չի կենտրոնանում, բաց է թողնում իր թիվը, դուրս է գալիս խաղից:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների տարբեր ասպեկտների

ներկայացում:

Վարողը նշում է, որ վարժությունը հենց այնպես չէր ընտրված. այն բարձրացրեց մասնակիցների տրամադրությունը: Հաջորդիվ ներկայացնում է ծնող-երեխա փոխհարաբերությունների տարբեր ասպեկտները՝ նշելով, որ հոգեբանության մեջ տարբերակում են մայր-երեխա և հայր-երեխա հուզական հարաբերություններ, որոնք այլ կերպ ձևակերպվում է որպես մայրական և հայրական սեր: Դրական հույզերի և սիրո գերակայության դեպքում երեխան իրեն ապահով և պաշտպանված է զգում ընտանիքում, ինչն էլ նպաստում է առհասարակ շրջակա միջավայրում նրա ապահովության զգացման և դրական տրամադրվածության ձևավորմանը: Հարկ է տարբերակել նաև ծնողների կողմից երեխային ուղղված սերն ու ընդունումը: Կարևոր է, որ ծնողը սիրելուն համատեղ նաև ընդունի երեխային: Հաճախ է պատահում, երբ ծնողը սիրում է երեխային, սակայն չի ընդունում նրան, նրա բնավորության և խառնվածքի առանձնահատկությունները, նրա պահվածքը, նրա մտածելակերպը, ինչի հետևանքով երեխան դառնում է ինքնամոկի, չշփվող, ձևավորվում է ցածր ինքնագնահատական, արտահայտվում է տագնապայնության և վախերի մակարդակը, հետևապես նա իրեն մերժված է զգում նաև սոցիալական միջավայրում:

Տարբերակում են ծնող-երեխա հուզական հարաբերությունների մի քանի տեսակներ.

- 1. Երեխայի՝ առանց պայմանի հուզական ընդունում.** սեր և կապվածություն՝ անկախ ամեն ինչից: Անպայման ընդունման դեպքում ծնողը տարբերակում է երեխայի անձը և նրա վարքը՝ երեխայի բացասական վարքագծի և գործողությունների քննադատման և մերժման դեպքում ծնողը չի նսեմացնում նրա հուզական նշանակությունը, չի իջեցնում երեխայի ինքնագնահատականը՝ որպես անձի: Հուզական հարաբերությունների այս տեսակն առավել բարենպաստ է երեխայի անձի զարգացման համար, քանի որ ընտանիքում ապահովվում է պաշտպանվածության, սիրո, հոգատարության մթնոլորտը: Տվյալ պարագայում հոգեբանական աջակցության անհրաժեշտություն չի նկատվում:
- 2. Պայմանական հուզական ընդունում.** երեխայի նկատմամբ սեր՝

պայմանավորված երեխայի հաջողություններով, արժանիքներով, վարքով: Այս դեպքում երեխան պետք է իր հաջողություններով, օրինակելի վարքով, ծնողների պահանջները կատարելով՝ արժանանա ծնողների սիրուն և ընդունելությանը: Երեխային թվում է, որ սերը դա պարզևատրում է, նվեր, որն ինքն իրեն չի տրվում և պահանջում է աշխատանք և մեծ ճիգեր:

3. **Ծնողական սիրուց զրկվածություն:** Այս դեպքում երեխան դառնում է տագնապային և անինքնավստահ:
4. **Ամբիվալենտ հուզական հարաբերություններ,** որն արտահայտվում է երեխային ուղղված դրական և բացասական զգացումներով, սիրո և թշնամանքի դրսևորումներով:
5. **Անտարբեր հուզական փոխհարաբերություններ:** Դրսևորվում է անտարբերությամբ, հուզական սառնությամբ և ցածր էմպատիայով:
6. **Թաքնված հուզական անտեսում, մերժում:** Ուղեկցվում է թաքնված արհամարհանքով, երեխայի նկատմամբ բացասական վերաբերմունքով:
7. **Երեխայի բացահայտ հուզական մերժում:**

Ըստ Ի. Բոլբիի՝ երեխան իրեն ավելի խոցելի է զգում, երբ.

- ծնողները չեն բավարարում երեխայի սիրված լինելու պահանջումները և մերժում են նրան,
- երեխան դառնում է ամուսինների միջև ծագած կոնֆլիկտների լուծման միջոց,
- ծնողները որպես պատիժ օգտագործում են «էլ քեզ չեմ սիրի», «կգնամ, տանից կհեռանամ» սադրանքները,
- ծնողներն ուղղակի կամ անուղղակի կեպով մեղադրում են երեխային իրենց անհաջողությունների մեջ,
- երեխայի շրջապատում չկա մեկը, ով ի վիճակի կլինի հասկանալ նրա ապրումները:

Հաջորդիվ վարողը ներկայացնում է այն արտաքին գործոնները, որոնք կարող են բացասաբար ազդել ծնող-երեխա փոխհարաբերությունների վրա՝

- քաղաքական իրավիճակը
- ծնողների ծանրաբեռնվածությունը աշխատավայրում
- լարվածությունը, գերհոգնածությունը
- սթրեսները
- ֆինանսական ոչ բավարար և անկայուն վիճակը
- ոչ բարենպաստ փոխհարաբերությունները ամուսինների միջև
- անձնական ժամանակի ոչ բավարար լինելը և այլն:

Ծնողների կողմից դաստիարակության ընթացքում հաճախ թույլ տրվող վրիպակներն են.

- անվերջ և անդադար քննադատությունները
- երեխայի անցանկալի առանձնահատկությունների ընդգծումը
- երեխային բացասական անվանումներով դիմելը, օրինակ՝ «հիմարի մեկը», «ինչ դանդաղաշարժ ես», «ինչ անջատված ես», «անուշադիր երեխա ես» և այլն/
- բոլոր անհաջողություններում երեխային մեղադրելը
- զբաղվածության պատճառով երեխայից խուսափելը, անտեսելը
- երեխայի նկատմամբ մեղադրական դիրքի ընդունումը
- սիրո արտահայտչամիջոցներից խուսափումը՝ կարծելով, թե դա բացասաբար կանդրադառնա երեխայի վրա
- անուշադրությունը երեխայի նկատմամբ
- դրական վերաբերմունքի բացակայությունը, անտեսումը
- երեխայի՝ հասակակիցների հետ շփման հնարավորությունների սահմանափակումը

Հետհայք դեպի մանկություն:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների վերլուծություններից հետո մասնակիցներին առաջարկվում է հիշել իրենց մանկությունը, վերհիշել և քննարկել, թե ինչ դեր են ունեցել ծնողները իրենց կյանքում, ինչպիսի պահանջներ են ներկայացրել, ինչ սպասումներ են ունեցել նրանք միմյանցից, ինչն էր առանձնահատուկ կարևոր ծնողների հետ հարաբերվելիս: Քննարկման ընթացքում ցանկալի է նշված արտահայտությունները հերթականությամբ նշել գրատախտակի վրա և վերլուծել:

Առաջադրանք:

Վարողը առաջադրում է մասնակիցներին մեկ շաբաթվա ընթացքում ուշադրություն դարձնել երեխայի նկատմամբ իրենց վարքի արտահայտչաձևերին, մոտեցումներին: Փորձել որքան հնարավոր է հասկանալ երեխային, արտահատել սերը և խուսափել այն իրավիճակներից և վարքաձևերից, որոնք կարող են ցավ պատճառել երեխային:

Ամփոփում: Մասնագետը ամփոփում է հանդիպման ընթացքում քննարկված նյութը:

Հանդիպում չորրորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. 6-7 տարեկանի ճգնաժամի ներկայացում
4. Վարժությունների իրականացում, դեպքերի քննարկում
5. Ամփոփում:

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Ողջույնի խոսքին և նախորդ հանդիպման անդրադարձին հաջորդում է տնային առաջադրանքի քննարկումը:

Յուրաքանչյուր մասնակից հակիրճ ներկայացնում է շաբաթվա ընթացքում իրականացված առաջադրանքի դժվարություններն ու հաջողությունները:

6-7 տարեկանի ճգնաժամի ներկայացում:

Թրեյնինգավարը ներկայացնում է 6-7 տարեկանի ճգնաժամը՝ նշելով, որ, եթե 3 տարեկանում ձևավորվում է մարդ տեսակին պատկանելիության գիտակցումը, ապա 7 տարեկանում որպես նորագոյացություն ձևավորվում է սոցիալական «ես»-ը. երեխան գիտակցում է իրեն՝ որպես սոցիալական խմբի, հանրույթի անդամ, որպես հաղորդակցման սուբյեկտ: 3-7 տարեկանը կարևոր շրջան է շփման հմտությունների զարգացման համար: Փոխվում է զարգացման սոցիալական իրավիճակը. երեխայի առջև կարծես պահանջ է դրվում կառուցել սոցիալական հարաբերություններ՝ նախ ընտանիքի անդամների, ապա շրջապատի մարդկանց հետ: Երեխան դեռևս չի տիրապետում շփման նորմերին, դժվարանում է կողմնորոշվել սոցիալական հարաբերություններում, ինչն էլ որոշակի խնդիրներ է առաջ բերում՝ նպաստելով ճգնաժամային իրավիճակի զարգացմանը: Որպես առաջատար գործունեություն՝ զարգանում են դերային խաղերը՝ նպաստելով սոցիալական նորմերի և դերերի, շփման ձևերի յուրացմանը: Սա ընկերական կապերի նախադրյալների զարգացման, խմբային զգացումի ձևավորման շրջանն է: Շփման հմտությունները զարգանում են հենց այս տարիքային շրջանում: Եթե երեխան այս փուլում բավարարի իր շփման պահանջմունքը, նա իրեն՝ որպես շփման սուբյեկտ, բավարարված կզգա նաև

հետագայում: Այս շրջանում ցանկալի է, որ երեխան այցելի զանազան միջոցառումների, շփվի տարբեր մարդկանց հետ, քանզի այս փուլում նա զգայուն է և ազահորեն յուրացնում է շփման ձևերը, սոցիալական նորմերը: 6-7 տարեկանի ճգնաժամը առավել սրվում է դպրոց գնալու կապակցությամբ, երբ երեխան կրկին հայտնվում է նոր իրավիճակում, որն իրենից նոր որոշումներ ու ճիգեր է պահանջում, փոխվում է առաջատար գործունեությունը, խաղային շրջանից անցում է կատարվում դեպի ուսում, իսկ ուսումնական գործունեությունը նրան նոր պահանջներ է ներկայացնում. նա պետք է ենթարկվի ընդունված կանոններին, իր ուսերին կրի դրված պատասխանատվությունը: Այստեղ չափազանց կարևոր է ուսուցիչ – ծնող համագործակցությունը, երեխայի խնդիրների քննարկումը, ինչը կնպաստի ճգնաժամի առավել մեղմ հաղթահարմանը: 6-7 տարեկանի ճգնաժամից հետո որպես նորագոյացություն ձևավորվում է նաև դրապատճառային համակարգը: Այդ իմաստով նրա վարքի վրա մեծ ազդեցություն են ունենում արտաքին դրդապատճառները, խրախուսանքը, նախատինքը, ակտիվանում է ընդունելության արժանանալու ձգտումը: Եվ երեխան հաճախ հայտնվում է ճգնաժամային իրավիճակում, երբ նախատինքի է արժանանում իր սոցիալական հարաբերությունների, շփման ձևերի դրսևորման համար: Երեխան ճգնաժամային իրավիճակում է հայտնվում, երբ նրա հետ չեն ցանկանում շփվել, մերժում են իրեն, օրինակ, երբ նրան ասում են՝ «ես չեմ ցանկանում խաղալ քեզ հետ, դու լավ ընկեր կամ եղբայր չես»: Եթե մինչ այս շրջանը ճգնաժամերի անբախում հաղթահարումը կախված էր ծնողներից, ապա 6-7 տարեկանի ճգնաժամի հաղթահարման գործում իրենց դերն ունեն ինչպես ծնողները, այնպես էլ հասակակիցներն ու մանկավարժները: Ճգնաժամի դրական հանգուցալուծման դեպքում երեխաները կարողանում են սեփական փորձի, գիտելիքների, կարողությունների հիման վրա ինքնուրույն որոշումներ կայացնել: Երեխայի մոտ ձևավորվում է կայուն դրական վերաբերմունք սեփական անձի և վստահություն սեփական ուժերի նկատմամբ: Համատեղ խաղերի ընթացքում հաշվի է առնում մյուսների հետաքրքրությունները, կարողանում է կարգավորել իր հույզերը:

Տեսական նյութը ավարտելուց մետո մասնագետը վերլուծում է, թե ինչպես կարելի է արդյունավետ հաղթահարել այս ճգնաժամային փու-

լը՝ ներկայացնելով հետևյալ առաջարկները՝

1. Անհրաժեշտ է հիշել, որ ճգնաժամը կրում է ժամանակավոր բնույթ և պետք է գինվել համբերությամբ, մինչև այդ շրջանի ավարտը:
2. Անհրաժեշտ է խթանել երեխայի ընկերական կապերի ձևավորումը, ուստի ցանկալի է, որ երեխան այցելի զանազան միջոցառումների, շփվի տարբեր մարդկանց, մասնավորապես հասակակիցների հետ, քանզի այս փուլում նա զգայուն է և ազահորեն յուրացնում է շփման ձևերը, սոցիալական նորմերը:
3. Այս փուլում երեխաների լարվածության պատճառ կարող են դառնալ հնարավորությունների և հավակնությունների անհամապատասխանությունը, ծնողական ոչ համարժեք սպասումները, որոնք երեխաները հաճախ դժվարանում են բավարարել, ուստի ծնողը իր սպասումները պետք է կառուցի՝ երեխայի իրական հնարավորությունները հաշվի առնելով:
4. Ցանկալի է երեխային տալ ինքնուրույն կողմնորոշվելու, ընտրելու և որոշում կայացնելու հնարավորություն:
5. Պետք է վերանայել երեխայի նկատմամբ վերաբերմունքը, ընդունել, որ նա արդեն մեծ է, հաշվի առնել նրա կարծիքը, ուշադրություն դարձնել նրա մտքերի և դատողությունների վրա՝ փորձելով հասկանալ նրան:
6. Երեխայի հետ շփվելիս ցանկալի է խուսափել հրամայական դիմելաձևից և փորձել հարցադրումների միջոցով նպաստել վարքի պատճառահետևանքային կապերի գիտակցմանը:
7. Զարգացնել երեխայի հուզավարքային վերահսկողությունը՝ հաշվի առնելով, որ ծնողի կերպարը ռեֆերենտային է երեխայի համար:
Անկախ երեխաների տարիքից՝ կարևոր է հիշել, որ ծնողավարության արդյունավետությունը պայմանավորված է ծնողների՝ դաստիարակության վերաբերյալ պատկերացումների համակարծրությամբ: Որոշում կայացնելիս կարևոր է ծնողների միասնական կարծիքը. անհամաձայնությունը նպաստում է երեխայի տագնապայնության աճին, ծնողների հեղինակազրկմանը՝ խոչընդոտելով վարքային արդյունավետ մոդելի ձևավորումը: Այս խնդիրը հաճախ դրսևորվում է մեծ ընտանիքներում, որտեղ ներկա են նաև տատիկն ու պապիկը, և որոշումներ ընդունելիս առկա է տարակարծություն:

Վարժությունների իրականացում, դեպքերի քննարկում:

Մասնակիցները բաժանվում են երկու խմբի, ներկայացվում է իրավիճակ. առաջին խմբին առաջարկվում է իրավիճակը ընկալել ծնողի, մյուս խմբին՝ երեխայի տեսանկյունից, այնուհետև քննարկվում են իրավիճակի հանգուցալուծման հնարավոր տարբերակները: Մասնագետն առաջարկում է հետևյալ իրավիճակը:

Իրավիճակ

Երեխան 6,5 տարեկան է, սակայն դպրոց հաճախել է 5,5 տարեկանից և դժվարությամբ է յուրացնում ուսումնական նյութը: Հաճախ իրեն համեմատում է դասընկերների հետ և տրամադրության ու ինքնագնահատականի անկումներ է ունենում: Մայրը ջանասիրությամբ երկար ժամանակ է տրամադրում դասապատրաստմանը, սակայն արդյունքները գոհացուցիչ չեն: Երեխան դյուրագրգիռ է, կոպտում է մայրիկին, դարձել է կամակոր: Դպրոցի նկատմամբ դրսևորում է բացասական վերաբերմունք, առավոտյան դժվարանում է արթնանալ, հաճախ լաց է լինում դպրոց գնալիս: Մայրիկը հայտնվում է հուզական անկայուն վիճակում, երբեմն հարվածում է երեխային և մեղքի զգացում է ունենում, քանի որ նախկինում նման վարքագիծ չի դրսևորել:



Վարողը մասնակիցների հետ միասին քննարկում է նշված իրավիճակը՝ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Այս վարժությունից հետո վարողը կրկին ներկայացնում է նշված ճգնաժամում գտնվող երեխայի նկար՝ առաջարկելով քննարկել հետևյալ հարցերը՝

«Ինչպե՞ս է զգում իրեն նկարում պատկերված երեխան», «Ինչպիսի՞ն իրավիճակում է նա հայտնվել», «Ինչպիսի՞ ելք կունենա տվյալ իրավիճակը», «Ինչպե՞ս կվարվեիք դուք այդ իրավիճակում»:

Ամփոփում:

Հաջորդիվ վարողն ամփոփում է հանդիպումը՝ կրկին առաջադրելով ծնողներին մեկ շաբաթվա ընթացքում փորձել վերահսկել սեփական հուզավարքային դրսևորումները, ծնող-երեխա փոխհարաբերություններում կիրառել այլընտրանքային մոտեցումներ, հետևել երեխայի արձագանքներին և գրանցել ձեռքբերումներն ու անհաջողությունները:

Հանդիպում հինգերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Դերային խաղի իրականացում
4. Դեռահասության առանձնահատկությունների ներկայացում
5. Գործնական առաջարկներ
6. Վարժության իրականացում, դեպքի քննարկում
7. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Վարողը անդրադառնում է նախորդ հանդիպմանը, քննարկում ծնողներին առաջարկված հանձնարարությունները, հուզական և վարքային փոփոխությունները, երեխաների հակազդումները, դժվարություններն ու դրական արդյունքները:

Դերային խաղի իրականացում:

Թրեյնինգավարն առաջարկում է իրականացնել դերային խաղ: Խաղարկման համար ըստ ցանկության ընտրվում են 3 մասնակիցներ, որոնք պետք է ստանձնեն ծնողի, երեխայի և ուսուցչի դերը, ապա ներկայացվում է հետևյալ իրավիճակը:

Իրավիճակ

Դեռահասը 12 տարեկան աղջիկ է: մինչ ճգնաժամային փուլը նա շատ հանգիստ էր, հավասարակշռված և ոչ կոնֆլիկտային: Արդեն 6 ամիս է՝ երեխայի մոտ նկատվում են տարիքին բնորոշ մարմնական փոփոխություններ՝ մազածածկույթի առաջացում, կրծքերի մեծացում, կողոսկրի լայնացում, դիմագծերի կոպտացում և այլն: Փոփոխություններից հետո երեխան ընտրում է այլ սանրվածք, որը փակում է դեմքը և նախընտրում է հագնել չափազանց լայն վերնաշապիկներ: Դժվարանում է պահպանել ընդունված նորմերն ու կրթական կանոնները, չի ենթարկվում ուսուցիչներին, խաթարում է ուսումնական գործընթացը: Ուսուցչուհին տեղյակ է պահել ծնողին վերոնշյալ խնդիրների մասին և խնդրել առավել հետևողական լինել այդ հարցերում:

Մինչ խաղը սկսելը վարողը դեռահասի դերը ստանձնող մասնակցին առաջարկում է փորձել հնարավորինս ապրումակցել դեռահասին և պատկերավոր իրականացնել այդ դերը:

Վարժության ավարտին իրականացվում է քննարկում, որտեղ դերային խաղի մասնակիցները ներկայացնում են իրենց ապրումները՝ նշելով՝ որքանով էր դյուրին խաղարկել այս կամ այն դերը:

Հաջորդիվ՝ դիտորդ մասնակիցները արտահայտում են իրենց ապրումներն ու կարծիքները և ծավալվում է քննարկում՝ ծնողի արդյունավետ մոտեցումները վերհանելու նպատակով:

Դեռահասության առանձնահատկությունների ներկայացում:

Հոգեբանը ներկայացնում է դեռահասության տարիքին բնորոշ խնդիրները և դժվարությունները՝ նշելով, որ բազմաթիվ գիտնականների կարծիքով դեռահասության ողջ շրջանն ինքնին ճգնաժամ է: Սա այն փուլն է, որի մասին կարելի է անընդմեջ խոսել, և որքան էլ այն ուսումնասիրենք, դեռևս կմնան անբացահայտելի իրողություններ: Այս շրջանի հիմնական նորագոյացությունը «հասունության զգացումն է», ինչի համար էլ «պայքար» են մղում դեռահասները: Դժվար է արտաբերել «երեխաներ» բառը, քանզի այս շրջանում նրանք ո՛չ երեխա են, ո՛չ էլ մեծահասակ: Հենց այդ միջանկյալ վիճակն էլ նպաստավոր պայմաններ է ստեղծում ճգնաժամի դրսևորման համար: Ի տարբերություն երեք տարեկան երեխայի, որը գիտակցում է իրեն որպես մարդ տեսակ, առանձնացնում է իրեն մյուսներից, դեռահասների մոտ ձևավորվում է ինքնագիտակցության առավել բարձր մակարդակ, որտեղ առաջնային է դառնում ներհայեցողությունը, ռեֆլեքսիան, արտահայտվում է ինքնավերլուծության միտումը, առաջանում են հարցեր՝ «ո՞վ եմ ես», «ինչպիսին եմ ես» և այլն: Սա էլ իր հերթին ինքնահաստատման, ինքնիրացման, ինքնարտահայտման, ինքնադաստիարակման պահանջ է առաջացնում: Դա նպաստում է ճգնաժամային և կոնֆլիկտային տարբեր իրավիճակների ձևավորմանը: Դեռահասը ցանկանում է, որ ծնողներն ու շրջապատը հաշվի նստեն իր հետ, հարգեն իր կարծիքը, ընդունեն իր որոշումները, իսկ ծնողներն էլ հաճախ դեռևս չեն կարողանում ընդունել, որ իրենց երեխան արդեն մեծ է, ինչն էլ նպաստում է ծնող-երեխա կոնֆլիկտի զարգացմանը: Ինքնահաստատման ձգտումը, իրենց

«ես»-ը հաստատելու միտումը հաճախ դեռահասներին մղում է հակասոցիալական արարքների. ոմանք փախչում են տանից՝ իրենց բողոքը արտահայտելով, ոմանք ընդգրկվում են տարբեր խմբերում, օրինակ՝ «էմոները», ոմանք էլ, ցավոք, ինքնասպանության փորձեր են կատարում՝ չհասկացված լինելու հետևանքով: Բանն այն է, որ դեռահասները շատ խոցելի են, հուզական և հեշտ են ընկնում այն մարդկանց ազդեցության տակ, ովքեր նրանց ընդունում են որպես հասուն, ինքնուրույն, անկախ: Ուստի հնարավորինս պետք է խորաթափանց լինել և փորձել միասին հաղթահարել այս տարիքային ճգնաժամը: Եթե երեք տարեկանում երեխայի մոտ ձևավորվում է ինքնագիտակցությունն առհասարակ, ապա այս շրջանում շատ կարևոր է սեռային ինքնագիտակցության կայացումը: Սա այն շրջանն է, որտեղ ամրագրվում է անձի ողջ կյանքում իրեն ուղեկցող սեռադերային վարքն ու սեռային կողմնորոշումը: Եթե մինչ այդ ծնողները միգուցե անտեսում են տղաների և աղջիկների ոչ համարժեք սեռադերային վարքի դրսևորումները, ապա դեռահասության շրջանում հարկավոր է անհանգստանալ, քանզի սա այն փուլն է, որը զգայուն է սեռային կողմնորոշման կայացման հարցում: Ինչպիսին համարեց իրեն աղջիկը՝ գրավիչ, կանացի կամ ոչ այնքան, ինչպիսի ինքնագանահատական ունեցավ տղան՝ կապված ուժի, առնականության դրսևորումների, տղամարդու կերպարի հետ, այդպես էլ կշարունակվի հետագա կյանքի ընթացքում և չափազանց դժվար, բայց ոչ անհնար կլինի այն ենթարկել փոփոխության: Հենց այս շրջանում է ակտիվանում սեռական հետաքրքրությունը, առավել կարևորվում միջսեռային փոխձգությունը, փոխադարձ գրավչությունը, և դեռահասները զգայուն են դառնում իրենց արտաքին փոփոխությունների նկատմամբ, որոնք պայմանավորված են ֆիզիոլոգիական և հորմոնալ տեղաշարժերով: Նրանք սկսում են բարդությավորվել իրենց ֆիզիկական փոփոխությունների համար, ոմանց մոտ ինքնագնահատականը կտրուկ անկում է ապրում: Ինչևէ, այս տարիքային ճգնաժամի մասին կարելի է անվերջ խոսել, սակայն պետք է նկատել նրա կարևորությունը անձի ողջ կենսագործունեության ընթացքում, քանզի անձի կայացման հիմքը դրվում է հենց այս շրջանում:

Դեռահասությանը բնորոշ են՝

- տաճնապայնությունը
- ազրեսիվությունը
- հուզական լարվածությունը
- անհիմն իմպուլսիվությունը
- նեգատիվիզմը

Առաջին հայացքից այս առանձնահատկությունները բացասական երանգավորում ունեն, սակայն իրականում դրանք ի հայտ են գալիս տարիքային փոփոխություններին հարմարվելու նպատակով:

Դեռահասության շրջանում առաջնային են դառնում հետևյալ տարիքային հիմնահարցերը՝

- ա/ արտաքին տեսքի համարժեք ընկալումը,
- բ/ կնոջ և տղամարդու դերերի հստակեցումը,
- գ/ հասակակիցների հետ միջսեռային հասուն հարաբերությունների հաստատումը,
- դ/ ծնողներից և այլ մեծահասակներից հուզական ինքնուրույնության ձգտումը,
- ե/ մասնագիտական կողմնորոշումը,
- զ/ ընտանեկան կյանքի մասին մտքերի և պատկերացումների ձևավորումը,

է/ պատասխանատվության զգացումի ձևավորումը,
 ը/ արժեհամակարգի և բարոյական գիտակցության ձևավորումը:
 Անցումային շրջաններն առավել մեղմ անցկացնելու նպատակով դեռահասի կողքին գտնվող մեծահասակները պետք է լինեն համբերատար, հնարավորինս մատչելի ներկայացնեն նրա հետ տեղի ունեցող փոփոխությունները, հաճախ իրականացնեն խմբային զրույցներ՝ ուղղված դժվարությունների հաղթահարմանը:

Գործնական առաջարկներ:

Տեսական նյութը ավարտելուց հետո թրեյնինգավարը ներկայացնում է դեռահասությանը բնորոշ մի իրավիճակ: Նա նշում է, որ շատ դեռահասներ կարծես ներքին տեղորոշիչ ունեն և հստակ զգում են, թե ինչն է նյարդայնացնում ծնողներին: Եթե ծնողը կարևորում է կուկիկությունն ու մաքրությունը, ապա դեռահասը հավանաբար կլինի անփոյթ, սենյակը՝ թափթփված, արտաքին տեսքը՝ վանող, իսկ մազե-

րը՝ չխնամված: Հաճախ դեռահասը գիտակցում և չի ցանկանում ցավ պատճառել ծնողին, սակայն ցուցաբերում է հակադրվող վարքագիծ: Նման իրավիճակներում ցանկալի է արձագանքել հետևյալ կերպ.

- Ընդունել երեխայի անհամբերությունը և անհասկանալի ցանկությունները: Ցանկալի չէ անդադար հարցնել դեռահասին՝ «ինչ է պատահել քեզ», «ինչու չես կարողանում հանգիստ նստել» և այլն: Նույնիսկ եթե դեռահասը գիտի այդ հարցերի պատասխանները, նա դժվարանում է ասել, որ իրեն անհանգստացնում են հակասական զգացումներն ու անհասկանալի ցանկությունները, այդպիսով նա կարող է հիասթափվել սեփական անձից:
- Խուսափել ամեն մանրուք «հասկանալու» և գիտենալու մոլուցքից. դեռահասները չեն ցանկանում ամբողջովին բացահայտված լինել: Սեփական հույզերն ու ապրումները նորույթ են իրենց համար և անչափ անձնային, օրինակ՝ կոնֆլիկտների մեջ ընդգրկվելը նրանց տալիս է եզակիության զգացում: Նրանց ոչնչացնում են ծնողների նմանատիպ վերլուծությունները՝ «ես հաստատ գիտեմ՝ ինչ ես դու զգում, այդ տարիքում ես էլ էի ունենում այդպիսի ապրումներ»: Նրանք չեն ցանկանում «թափանցիկ» լինել ծնողների համար: Ծնողը պետք է զգա՝ երբ է անհրաժեշտ երեխային ապրումակցել, իսկ երբ՝ ոչ:
- Փորձել երեխային ընդունել իր դրսևորումներով հանդերձ: Ընդունել նրա առանձնահատկությունները չի նշանակում հավանություն տալ դրանց: Ծնողը, գիտակցելով տարիքային առանձնահատկությունները, կարող է ընդունել երեխայի վարքի արտահայտչաձևերը, որոնք միգուցե տհաճ են իր համար: Օրինակ՝ հայրիկին զայրացնում են տղայի երկար մազերն ու պատռված տաբատը, սակայն նա ընդունում է այդ դրսևորումները և փորձում համբերատար սպասել մինչև այդ շրջանի ավարտը: Հակասություններն ու վեճերը լարվածություն են հավելում ծնող-երեխա փոխհարաբերություններին:
- Ցանկալի չէ կոնտակտ հաստատելու նպատակով արհեստականորեն կրկնօրինակել երեխայի վարքագիծը կամ խոսքը: Դեռահասները գիտակցաբար են ընտրում մեծահասակի ապրելակերպից տարբերվող կացութաձև: Շատ դեռահասներ դյուրագրգիռ են դառնում, երբ ծնողները փորձում են մրցակցել իրենց հետ: Նրանք գնահա-

տում են, երբ ամեն ոք իր տեղում է՝ մայրը մայր է, հայրը՝ հայր, և ոչ ոք չի փորձում խախտել կանոնները:

- Խուսափել երեխայի հետ անձնային նույնացումից և նրա թերացումները չընկալել որպես վիրավորանք՝ ուղղված սեփական անձին: Հաճախ ծնողները բարձրաձայնում են նմանատիպ արտահայտություններ՝ «ինչու իմ երեխան պետք է այսպիսին լինի» կամ «իմ երեխան չի կարող վախկոտ լինել» և այլն: Շատ դեպքերում ծնողների կարծիքով դեռահասին պետք է մատնացույց անել իր թերությունները, սակայն դա միայն լարվածություն է առաջացնում ծնող-երեխա փոխհարաբերություններում: Օրինակ, եթե երեխան դյուրագրգիռ է, ապա անդադար շեշտելով այդ հանգամանքը՝ ծնողը հավելյալ կենտրոնացնում է երեխայի ուշադրությունը այդ հատկության վրա: Նման իրավիճակներում ցանկալի է վերհանել երեխայի դրական կողմերը, ակնառու դարձնել անձնային ներուժը, որը թույլ կտա հաղթահարել նշված խնդիրները:
- Խուսափել ինքնագնահատականը խոցող արտահայտություններից և մոտեցումներից: Դեռահասներն ունեն իրենց թերությունները, ինչպես և յուրաքանչյուր մարդ, սակայն ի տարբերություն մյուսների՝ նրանք առավել զգայուն ու խոցելի են դրանց հանդեպ: Երեխան կարող է լինել կարճահասակ, թմբլիկ, նիհար, գունատ, իսկ մեծահասակները, ամեն անգամ հիշեցնելով այդ մասին, կարող են նպաստել ինքնագնահատականի անկմանն ու թերարժեքության զգացումի ձևավորմանը, ինչն էլ միգուցե խորը հետք թողնի ողջ կյանքի ընթացքում:
- Հնարավորություն տալ դեռահասին կայացնել ինքնուրույն որոշումներ: Այս տարիքում դեռահասները ձգտում են ինքնուրույնության և բնականաբար որոշ դեպքերում կարող են նաև սխալվել, սակայն այդ սխալների միջոցով նրանք հետագայում սովորում են կայացնել առավել արդյունավետ որոշումներ: Դեռահասի համար նշանակալի է ծնողի վստահությունը ինքնուրույն որոշումներ կայացնելու հարցում: Փորձը ցույց է տվել, որ այս պարագայում դեռահասները վստահում են սեփական ուժերին և հասնում են ցանկալի հաջողությունների:
- Հնարավորություն տալ դեռահասին առանձնանալ և ունենալ ան-

ծնական տարածք: Ծնողներից շատերը ցուցաբերում են չափազանց մեծ հետաքրքրասիրություն, լսում են դեռահասի խոսակցությունները, կարդում են նամակները կամ օրագրերը: Նման դեպքերում երեխային համակում է վիրավորանքի զգացումը. նա անվստահություն է զգում ծնողի կողմից, ինչի հետևանքով կարող է խախտվել ծնող-երեխա համագործակցությունը: Հաճախ անվստահությունը նպաստում է նաև ստախոսության դրսևորմանը: Դեռահասը ցանկանում է հարգանք անձնական կյանքի և տարածքի նկատմամբ:

- Խուսափել անհաջողությունների կանխատեսումներից: Հաճախ ծնողները ոչ ցանկալի վարքը շտկելու համար արտահայտում են իրենց մտավախությունները երեխայի անբարենպաստ ապագայի վերաբերյալ, օրինակ՝ կանխատեսում են. «Եթե դու վատ սովորես դպրոցում, հետագայում ցանկալի աշխատանք չես կարող գտնել», կամ. «Նման պահվածքով քեզ ոչ ոք չի սիրի» և այլն: Ոչ մի ծնող չի կարող կանխատեսել երեխայի ապագան, ուստի ցանկալի չէ կռահել, թե ինչ կպատահի երեխայի հետ համապատասխան վարք ցուցաբերելու դեպքում: Նման ենթադրությունները կարող են արմատավորվել երեխայի ներաշխարհում և նպաստել իրական անհաջողությունների դրսևորմանը:
- Խուսափել հակասական ցուցումներից: Դեռահասը ծնողից ակնկալում է հստակ պատասխաններ իր հարցերին. անորոշ, կասկածա-հարույց մոտեցումները նպաստում են տազնապայանության աճին: Երեխայի մոտ նկատվում են հուզական անկայուն հոգեվիճակներ, երբ ծնողը թույլատրում է այս կամ այն գործողությունը՝ միևնույն ժամանակ նշելով հակասական պայմաններ: Օրինակ՝ ծնողը աղջկան թույլ է տալիս մասնակցել երեկույթին՝ նշելով, որ պետք է տուն վերադառնա մեկ ժամ հետո՝ մինչև հայրիկի տունդարձը: Իրավիճակը բավականին հակասական է, քանի որ աղջիկը հստակ գիտակցում է, որ նման պայմաններում իր մասնակցությունը երեկույթին անիմաստ է, միևնույն ժամանակ նրա ցանկությունը բավականին մեծ է: Նման դեպքում ցանկալի է, որ ծնողը ցուցաբերի փոխզիջումային մոտեցում և երեխայի հետ ձեռք բերի պայմանավորվածություն՝ առաջարկելով առավել օպտիմալ տարբերակ:

Վարժության իրականացում, դեպքի քննարկում:

Գործնական առաջարկներից հետո վարողը մասնակիցների հետ իրականացնում է դեռահասության ճգնաժամում գտնվող երեխայի նկարի վերլուծություն՝ ըստ հետևյալ հարցերի՝ **«Ձեր կարծիքով ինչպե՞ս է զգում իրեն նկարում պատկերված երեխան», «Ինչպիսի՞ իրավիճակում է նա հայտնվել», «Ինչպիսի՞ ելք կունենա տվյալ իրավիճակը», «Ինչպե՞ս կվարվեիք դուք այդ իրավիճակում»:** Նա ցուցադրում է հետևյալ նկարը:



Ամփոփում:

Հանդիպման ավարտին վարողը մասնակիցների հետ միասին քննարկում և վերլուծում է խնդրահարույց տարբեր հարցեր, մոտեցումներ՝ ընդհանրացնելով ծնողավարության հիմնական սկզբունքները դեռահասության ճգնաժամը հաղթահարելիս: Այնուհետև առաջարկում է մեկ շաբաթվա ընթացքում մտորել դաստիարակության ոճերի մասին, դիտարկել տարբեր ծնողների դաստիարակության մոտեցումները, գրառել սեփական նկատառումները, քանի որ հաջորդ հանդիպումը նվիրված է լինելու դաստիարակության ոճերի քննարկմանը:

Հանդիպում վեցերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Առաջադրանքի քննարկում
4. Ծնողի դաստիարակության ոճերի ներկայացում
5. Դերային խաղի իրականացում
6. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Վարողը ողջունում է մասնակիցներին և տարբեր հարցադրումներով փորձում պարզել նախորդ հանդիպման արդյունավետությունը և փոփոխությունները մասնագետների մտածելակերպում և գործելաոճում:

Առաջադրանքի քննարկում:

Առաջարկվում է վերհիշել նախորդ հանդիպման ավարտին տրված առաջադրանքը և խմբերի բաժանվելով՝ քննարկել նրանց դիտարկումները դաստիարակության ոճերի մասին, հիշել ծանոթ ընտանիքներին և ծնողներին, դաստիարակության նրանց մոտեցումները, ոճերի տարբերությունները, արդյունավետությունը և այլն:

Ծնողի դաստիարակության ոճերի ներկայացում:

Թրեյնինգավարը ներկայացնում է տեսական ակնարկ դաստիարակության ոճերի վերաբերյալ՝ նշելով, որ երեխայի անձի ներդաշնակ զարգացումը պայմանավորված է ընտանիքում դաստիարակության ոճով:

Տարբերակում են հետևյալ հիմնական դաստիարակության ոճերը.

1. Ավտորիտար ոճ
2. Դեմոկրատական ոճ
3. Թողտվական ոճ
4. Գերխնամք

Ավտորիտար դաստիարակության դեպքում ծնողները մշտապես վերահսկում են երեխաների վարքը, մեծ պահանջներ են ներկայացնում նրանց, հաճախ են կիրառում պատիժներ և քննադատություններ, իրենք են որոշումներ կայացնում երեխաների փոխարեն՝ հաշվի չառնելով նրանց կարծիքը, հետաքրքրություններն ու ցանկությունները:

Այս դեպքում երեխան կամ մեծանում է սեփական արժանապատվության զգացման կորստով, չի կարողանում որոշումներ կայացնել, պատասխանատվություն կրել իր ընտրության համար, չի հասկանում՝ ինչ է ուզում, կամ դառնում է բռնակալ, բոլոր խնդիրները լուծում է ուժի և ագրեսիայի միջոցով, լինում է շատ կոնֆլիկտային, այլ մարդկանց հանդեպ դրսևորում է արհամարհական վերաբերմունք:

Թողտվական ոճի դեպքում ծնողը թույլ է տալիս երեխային ամեն ինչ, ոչ մի սահմանափակում չի կիրառում նրա հանդեպ, չի միջամտում նրա որոշումներին՝ ո՛չ օգնում է, ո՛չ խրախուսում, ո՛չ քննադատում: Երեխայի անձն այս դեպքում կարծես միևնույն է ծնողի համար: Նման կերպով դաստիարակված երեխան կամ դժվարանում է կապվածություններ ու մտերմություն հաստատել այլ մարդկանց հետ, ցանկություն չի ունենում հոգ տանել ինչ-որ մեկի մասին, օգնել նրան, անտարբեր է լինում հարազատների նկատմամբ, կամ դառնում է անձ՝ «առանց արգելակների և արգելքների», անում է այն, ինչ ուզում է, լինում է շատ անպատասխանատու, հակում է ունենում ստախոսության, գողության, անբարոյականության:

Գերխնամքի դեպքում ծնողներն ամեն կերպ փորձում են գերհոգատարությամբ երեխային զերծ պահել դժվարություններից, իրականացնել նրա բոլոր ցանկությունները: Ծնողներն այս դեպքում խնայում են երեխային, ամեն ինչ անում են նրա փոխարեն, որպեսզի նա չլարվի, չհոգնի, նեղություն չկրի: Նման երեխաները կամ դառնում են եսասեր, ինքնահավան, կամակոր, շահարկում են շրջապատի մարդկանց, պահանջում են, որ իրենց ցանկությունները հենց այս պահին իրականանան, կամ դառնում են կախյալ անձ, չնախաձեռնող, անօգնական, վախկոտ, փախչում են դժվարություններից, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել:

Դեմոկրատական դաստիարակության ոճը համարվում է ամենաօպտիմալը:

Այս դեպքում ծնողների համար կարևոր է երեխայի անձը, նրա ակտիվ դերը ընտանիքում: Երեխան դաստիարակվում է որպես ինքնուրույն անձ: Այս ոճի հիմքում ընկած է փոխըմբռնումն ու փոխադարձ հարգանքը, երեխայի արարքներին տրվում է համարժեք գնահատական, քննադատվում է ոչ թե երեխան, այլ նրա վարքագիծը: Վերահսկողությունը չի

ուղեկցվում երեխայի անձը ճնշելով կամ նրան ստորացնելով: Դրական վարքագիծը խրախուսվում է, բացասականը՝ քննադատվում: Դաստիարակության այս ոճի պարագայում ձևավորվում է ներդաշնակ և բազմակողմանի անձ, նա կարողանում է ինքնուրույն որոշումներ կայացնել և պատասխանատվություն կրել սեփական արարքների և ընտրությունների համար, նախաձեռնող է, նպատակասլաց, ունակ է համագործակցել, հաշվի առնել դիմացինի կարծիքը, համբերատար է:

Առավել տպավորիչ լինելու համար վարողը մասնակիցների հետ միասին ցուցատախտակի վրա ամփոփում է դաստիարակության ոճերի հիմնական բնութագրերի ներկայացումը, որը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Դեմոկրատական ոճ	Ավտորիտար ոճ	Թողտվական ոճ	Գերխնամք
1. Հուզական կապվածություն	1. Հուզական թույլ կապ	1. Ծնողի հեղինակության բացակայություն	1. Գերիզատարություն ծնողի կողմից
2. Երկկողմանի հարգանքի, քննարկումների առկայություն	2. Ծնողի կարգադրումներն անհապաղ կատարելու սովորույթ	2. Բարձիթողի վարքագիծ	2. Երեխայի ցածր ինքնուրույնություն
3. Երեխայի կարծիքը հաշվի առնելու կարողություն	3. Քննարկումների բացակայություն	3. Սահմանների բացակայություն	3. Առանց ծնողի որոշումներ կայացնելու անկարողություն
4. Միասին որոշումներ կայացնելու կարողություն	4. Երեխայի կարծիքը հաշվի առնելու անկարողություն	4. Ծնողի նկատմամբ հարգանքի բացակայություն	4. Հուզական և վարքային կախվածություն ծնողներից
5. Սահմանների առկայություն	5. Միասին որոշումներ կայացնելու ցանկության բացակայություն		

Դաստիարակության ոճերը վերլուծելուց հետո վարողը ներկայացնում է ընտանեկան փոխհարաբերությունների կարգավորմանն ուղղված հոգեբանական աջակցության հետևյալ ուղղությունները.

1. Աշխատանք ծնողների հետ՝ դաստիարակության արդյունավետ ոճի քննարկման նպատակով: Կան աշխատանքի ձևեր և մեթոդիկաներ, որոնք կօգնեն ձևավորել և ստեղծել ճիշտ հարաբերություններ ծնողների և երեխաների միջև: Օրինակ՝ «Երջանիկ է նա, ով երջանիկ է իր տանը» աշխատանքն ստեղծում է ընտանիքում նոր արժեքային համակարգ, ծնողներին ցույց է տալիս իրենց դաստիարակության դրական և բացասական կողմերը և դրանց ազդեցու-

թյունը երեխայի վրա, ծնողները հնարավորություն են ստանում վերլուծություններ և եզրահանգումներ անել: Վերոնշյալ աշխատանքի խնդիրներն են՝

- ստեղծել նախադրյալներ՝ ընտանիքում ձևավորելու երեխա-ծնող հարաբերությունների արդյունավետ մոտեցումներ,
- կենտրոնանալ դաստիարակության դրական կողմերի և երեխայի նկատմամբ սիրո դրսևորման վրա,
- սահմանել ծնող-երեխա հարաբերությունների հիմնական սկզբունքները:

2. Երեխայի և ծնողի հետ ընտանիք հասկացության և ընտանիքի անդամների գործառույթների, դերերի քննարկում, վերլուծություն և արժևորում: Երեխայի կյանքում ընտանիքն ամենակարևոր և առաջնային սոցիալական խմբերից է, որտեղ էլ ձևավորվում են շփման հմտությունների նախադրյալները: Պայմանավորված այն հանգամանքով, թե նա ինչպիսին է տանը, ինչպես են նրան վերաբերվում, ինչպիսի ներընտանեկան մթնոլորտ և փոխհարաբերություններ են տիրում ընտանիքում, երեխան դրանից բխող փոխհարաբերություններ է հաստատում նաև այլ սոցիալական խմբերում: Սույն նպատակով հոգեբանական աջակցությունը կարելի է իրականացնել դերային խաղերի օգնությամբ, օրինակ՝ մասնագետն առաջարկում է դերային խաղ, որտեղ ծնողն ու երեխան պետք է դերերով փոխվեն, ինչը նպաստում է սեփական վարքագծի վերանայմանը:

3. Առանձին աշխատանք երեխայի և ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ: Երեխա-մայր փոխհարաբերությունները կարգավորելու համար անհրաժեշտ են խաղ-վարժություններ՝ ուղղված նրանց հուզական կապի ամրապնդմանը (կարելի է քննարկել մայրության տոնի խորհուրդը, մոր հետ երեխայի սիմբիոտիկ կապը, երեխայի ծնունդը, մայրական ինտուիտիվ զգացումները երեխայի հոգեվիճակի, առողջության և այլնի վերաբերյալ): Աջակցության ընթացքում կիրառելի է նաև ծնողի և երեխայի՝ միմյանց հանդեպ տաժաժ վերաբերմունքի խոսքայնացումը պատմությունների, հեքիաթների և նկարների միջոցով:

Հայր-երեխա փոխհարաբերությունների բարելավման, համագոր-

ծակցության զարգացման նպատակով առաջարկվում է ներգրավել նրանց համատեղ գործունեության մեջ, հատկապես երբ խոսքը գնում է արական սեռի երեխաների մասին, օրինակ՝ ցանկալի է, որ հայրը ներգրավի երեխային կենցաղային պարագաների վերանորոգման աշխատանքների մեջ, միասին կազմակերպեն իրենց հանգիստն ու ժամանցը, միասին համագործակցային և կառուցողական խաղեր խաղան (դոմինո, լոտո, լեգո, փազլ և այլն): Նմանատիպ աշխատանքներ են իրականացվում նաև քույր-եղբայր փոխհարաբերությունների կարգավորման համար՝ հավելելով մրցակացության, խանդի, նախանձի զգացումների հաղթահարմանն ուղղված խաղերն ու վարժությունները:

Դերային խաղի իրականացում:

Աջակցության ուղղությունների քննարկմանը հաջորդում է դերային խաղի իրականացումը: Մինչ այդ վարողը մասնակիցներին առաջարկում է հետևյալ իրավիճակները, որտեղ նրանք, ստանձնելով երեխայի և ծնողի դերը, պետք է ներկայացնեն նրանց վարքագիծը տարբեր դաստիարակության ոճերի տեսանկյունից:

Իրավիճակներ

1. Երեխան բակից տուն է վերադարձել զայրացած, փողոցում վիճել է ինչ-որ մեկի հետ:
2. Երեխան եկել է դպրոցից տուն, մաթեմատիկայից ստացել է 4 գնահատականը:
3. Մայրը պատահաբար իմացել է, որ իր երեխան ծխում է:
4. Հայրն իմացել է, որ 15 տարեկան իր աղջիկն ընկերություն է անում ինչ-որ տղայի հետ:
5. Մայրիկը աշխատանքից վերադառնում է տուն և տեսնում, որ երեխաները տունը դարձրել են աղբանոց՝ հատակին կոնֆետների թղթեր և ճաշի մնացորդներ են գցել, պատերի վրա նկարչությամբ են զբաղվել և այլն:

Ամփոփում: Դերային խաղից հետո մասնակիցները քննարկում են իրենց ապրումները, դերը ստանձնելու դժվարությունները, իրենց պատկերացրած հնարավոր լուծումները, վերլուծում են իրենց վերաբերմունքը՝ որպես մասնակից և որպես դիտորդ:

Հանդիպում յոթերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Վարժության իրականացում
4. Բռնության տեսակների քննարկում
5. Դերային խաղի իրականացում
6. Բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակների վերլուծություն
7. Ամփոփում:

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Յուրաքանչյուր անգամ ողջունի խոսքից և նախորդ հանդիպման անդրադարձից հետո վարողը կարող է իրականացնել մասնագետների մասնակցությունը խթանող և ակտիվացնող վարժություն: Այս անգամ, մինչև բուն թեմայի քննարկումը, վարողը մասնակիցներին հղում է հետևյալ հարցը.՝ «Ի՞նչ եք կարծում՝ որն է մասնագիտական ընտրության ձեր հիմնական շարժառիթը, և ինչպես է փոփոխվել այն տարիների ընթացքում, ի՞նչ է պատճառը, ինչի շնորհիվ դուք այսօր այստեղ եք, և ի՞նչ կարող է լինել ձեր մասնագիտական աճն ապահովորող ակտիվ դրդապատճառը»: Յուրաքանչյուրին լսված լինելու հնարավորություն տրամադրելուց և քննարկում իրականացնելուց հետո վարողը իրականացնում է մի վարժություն, որն անմիջականորեն կապված է նշված հանդիպման թեմայի հետ:

Վարժության իրականացում:

Վարողը խնդրում է մասնակիցներին փակել աչքերը և վերհիշել իրենց փոքր հասակում: Նա նկարագրում է հետևյալ իրավիճակը. «Դուք տեսնում եք փոքր երեխայի, դա դուք եք փոքր հասակում: Ծագել է ինչ-որ խնդիր, ձեր մայրը չի հասկանում ձեզ, դուք շատ լարված եք, նա վիրավորում է ձեզ, ըստ ձեզ՝ դա արդարացի չէ, դուք շատ վատ եք զգում: Ձեր զգացմունքները շատ հակասական են. դուք շատ սիրում եք ձեր մայրիկին, միևնույն ժամանակ խիստ վիրավորված եք նրանից: Մոտեցեք այդ երեխային, փորձեք հանգստացնել նրան, քանի որ դուք

հասուն մարդ եք և հստակ հասկանում եք, որ, անկախ ամեն ինչից, ձեր մայրը շատ է սիրում ձեզ և չի ցանկացել ձեզ վիրավորել: Գրկեք ձեր մանկությունը, ցտեսություն ասեք նրան, քանի որ պետք է վերադառնալ իրականություն: Դուք արդեն այստեղ եք, այս սենյակում: Կարող եք բացել ձեր աչքերը»:

Հաջորդիվ՝ վարողը իրականացնում է քննարկում՝ հնարավորություն ընձեռելով մասնակիցներին խոսել զգացմունքների մասին: Նրանք նշում են՝ ինչպես են վերաբերվում ծնողների կողմից բռնության կիրառմանը, ինչպիսի հետևանքներ այն կարող է ունենալ:

Բռնության տեսակների քննարկում:

Թրեյնինգավարը տրամադրում է տեսական գիտելիքներ բռնության տեսակների վերաբերյալ՝ նշելով, որ տարբերակում են բռնության հետևյալ տեսակները.

- Հոգեբանական բռնություն
- Սեռական բռնություն
- Տնտեսական բռնություն
- Ֆիզիկական բռնություն

Հոգեբանական բռնությունը հոգեբանական ցնցումնահարույց վերաբերմունքի ցուցաբերումն է, այդ թվում՝ երեխայի ստորացումը, վիրավորանքը, ծաղրանքը, բացասական վերաբերմունքը, մերժումը և այլն: Այլ կերպ ասած՝ սիրո բացակայությունը, անտարբերությունը, հասակակիցների հետ շփման հնարավորության սահմանափակումը, հոգեբանական պատիժների և զրկանքների կիրառումը և այլն:

Հոգեբանական բռնության դեպքում երեխաների մոտ հնարավոր է կանխատեսել նշված հետևանքները.

- պարփակվածություն
- տրամադրության բացասական ֆոն, ընկճախտ
- վախ, տագնապայնություն, ծնողի նկատմամբ անվստահություն,
- զգացմունքներն արտահայտելու դժվարություններ
- հուզական ջերմության պակաս
- հասակակիցների կողմից գովեստների արժանանալու արտահայտված ցանկություն
- հակադրվող վարքագիծ կամ ենթարկվողականություն և այլն:

Սեռական բռնությունը երեխայի կամ անչափահասի շահարկումն է սեռական բավարարվածություն ստանալու նպատակով, երեխային տարիքին ոչ համապատասխան սեռական բնույթի ֆիլմերի և տեսա-ժապավենների ցուցադրումը, ինչպես նաև սեռական գործողությունների իրականացումը երեխայի ներկայությամբ:

Սեռական բռնության դեպքում երեխաների մոտ հաճախ նկատվում են հետևյալ արտահայտումները.

- ինքնամփոփություն
- ագրեսիայի արտահայտման բարձր մակարդակ
- սեռական վարքագծի բացահայտ դրսևորում
- վախեր, բարձր տագնապայնություն
- միջսեռային փոխհարաբերություններում արտահայտված խնդիրների դրսևորում
- ընտանեկան փոխհարաբերությունների մոդելի աղավաղումներ
- սեռական կողմնորոշման ոչ համարժեք դրսևորումների հավանականություն և այլն:

Տնտեսական բռնությունը ծնողի կամ պատասխանատու այլ անձի կողմից երեխայի կամ անչափահասի՝ սննդի, հագնվելու, կացարանով ապահովված լինելու պահանջմունքների բավարարման դեպրիվացիան է, կրթության իրավունքի սահմանափակումը, բժշկական խնամքի անտեսումը, տարիքին ոչ համապատասխան գործունեության թույլատրումը, շահագործումը և այլն: Այն հաճախ ուղեկցվում է.

- երեխայի ֆիզիկական հյուծվածությամբ, ֆիզիկական զարգացման ցածր մակարդակով
- մտավոր հնարավորությունների տարիքային անհամապատասխանությամբ
- առողջության հնարավոր վատթարացումներով
- ընդհանուր հյուծվածությամբ
- բնորոշ են վերը նշված բոլոր հոգեբանական խնդիրները և այլն:

Ֆիզիկական բռնությունը ծնողի կամ պատասխանատու այլ անձի կողմից երեխայի կամ անչափահասի նկատմամբ ֆիզիկական ագրեսիայի կիրառումն է՝ ֆիզիկական վնասվածքներ հասցնելու միջոցով՝ հրմշտոցը, թափահարությունը, հարվածելը, հրելը, ապտակելը, խեղ-

դելը, մագերից քաշելը և այլն:

Ֆիզիկական բռնության հավանական հետևանքներն են.

- ագրեսիայի արտահայտման բարձր մակարդակը
- արտահայտված վախը ֆիզիկական ագրեսիայից
- սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը
- ոչ համարժեք ինքնագնահատականը
- անվստահությունը ծնողների և մարդկանց նկատմամբ
- ինքնուրույն որոշում կայացնելու անկարողությունը
- նյարդային համակարգի հյուծվածությունը և այլն:

Դերային խաղի իրականացում:

Տեսական նյութի տրամադրումից հետո վարողը նշում է, որ բռնության ոչ մի տեսակ չի կարող ունենալ դրական հետևանքներ, և նույնիսկ ծնողների կողմից կիրառվող ապտակների ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ՝ ուղեկցվելով ոչ թե ծնողի նկատմամբ հարգանքով, այլ վախով: Հաջորդիվ առաջարկում է իրականացնել դերային խաղ՝ ներկայացնելով հետևյալ իրավիճակը.

Իրավիճակ

Տղան 6 տարեկան է: Մոր և երեխայի միջև լարվածություն է առաջանում՝ պայմանավորված դպրոց հաճախելու և դասապատրաստման հետ: Երեխան ունի արական սեռին բնորոշ որակները ընդգծելու և չենթարկվելու միտում: Առավոտյան նա արթնանում է դժվարությամբ, ցուցաբերում է կամակորություններ, չի ցանկանում վեր կենալ անկողնուց և հագնվել: Մայրը համբերատար փորձում է շտկել իրավիճակը՝ օգնել հագնվել, լվացվել, նախաճաշել, սակայն երեխան իր կամակորությամբ հաճախ զայրացնում է ծնողին: Ծնողը դառնում է դյուրագրգիռ և կարող է կոպտել, բղավել, երբեմն հարվածել երեխային:

Իրավիճակը ներկայացնելուց հետո վարողը կենտրոն է հրավիրում երեք մասնակցի և առաջարկում իրականացնել դերային խաղ, որտեղ մասնակիցներից մեկը ստանձնում է երեխայի դերը՝ փորձելով ապրումակցել և հասկանալ նրա վարքի դրդապատճառները, իսկ մյուս մասնակիցը՝ ծնողի դերը՝ ջանալով հասկանալ ծնողի ապրումները, անելանելիությունը, հոգեվիճակները և այլն: Երրորդ մասնակիցը, կա-

տարելով հոգեբանի դերը, վերլուծում է իրավիճակը և փորձում գտնել համագործակցության ելքեր ծնող-երեխա փոխհարաբերություններում:

Դերային խաղն ավարտվում է մասնակիցների վերլուծություններով և քննարկումներով, որտեղ նրանք առաջարկում են բռնություն պարունակող իրավիճակների հաղթահարման տարբեր ուղիներ:

Բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակների վերլուծություն:

Վարողը նշում է բռնությանը փոխարինող առավել արդյունավետ մոտեցումներ:

1. Օրվա ռեժիմի հստակությունը և պահպանումը:

Մասնագետը նշում է, թե որքան կարևոր է օրվա ռեժիմի պահպանումը երեխայի անհոգ և խաղաղ մանկության ապահովման համար: Այս համատեքստում կարևորվում է երեխայի քունը, քանի որ վերջինիս ոչ լիարժեքությունը բացասաբար է անդրադառնում երեխայի հոգեվիճակի վրա: Նմանապես անհրաժեշտ է կարգավորել նաև սնվելու գործընթացը, ուսման և հանգստի պատշաճ կազմակերպումը, ինչպես նաև կարգուկանոնից շեղվելու սովորույթը:

2. «Մտածիր և նոր գործիր» վարժության կիրառումը:

Այդ վարժության նպատակն է զարգացնել ծնողների ինքնատիրապետման հմտությունը: Երբ ծնողը հայտնվում է հուզական անկայուն իրավիճակում, ցանկալի է, որ նա մեկուսանա այն իրավիճակից, որտեղ հայտնվել է երեխայի հետ միասին, օրինակ՝ առանձնանա սենյակում և ժամանակավորապես չհաղորդակցվի երեխայի հետ: Սա հնարավորություն է տալիս ծնողին զսպել հույզերը, կշռադատել մտքերը և կողմնորոշվել իրավիճակում:

3. «Երեխայի դրական վարքագծի արժևորումը բռնության փոխարեն»:

Սա նույնպես բացասական հույզերից շեղող և ինքնակառավարումը զարգացնող վարժություն է: Զայրացած կամ անկառավարելի իրավիճակում ցանկալի է, որ ծնողները այդ պահին կենտրոնանան երեխաների դրական որակների վրա, հիշեն և բարձրաձայնեն նրանց առավելությունները, թե որքան են նրանց սիրում, որքան կարևոր են իրենց համար և այլն: Հաջորդիվ կարելի է երեխայի հետ միասին

քննարկել ոչ ցանկալի արարքը:

Ամփոփում:

Քննարկումներից հետո վարողը ամփոփում է հանդիպումը՝ առաջարկելով փորձել այս վարժությունները կիրառել երեխաների հետ հաղորդակցվելիս:

Հանդիպում ութերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հոգեբանական բնութագրի ներկայացում
4. Վարժությունների իրականացում
5. Ամփոփում:

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Նախորդ հանդիպման անդրադարձից հետո վարողը նշում է, որ այս հանդիպումը տարբերվում է մյուսներից, քանի որ վերաբերում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և նրանց ծնողների հուզական ապրումներին, վարքային դրսևորումներին և փոխհարաբերություններին: Մասնագետը նշում է, որ ծնողների այս խումբը բավականին խոցելի է, քանի որ նրանց մոտ դրսևորվում է խնդիրների մի ամբողջ համախումբ՝ պայմանավորված երեխայի ախտորոշմամբ, հասարակության ոչ համարժեք վերաբերմունքով և դրանցից բխող ներանձնային ու միջանձնային բախումներով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հոգեբանական բնութագրի ներկայացում:

Երեխայի ծնունդը ծնողներին երջանկություն և բերկրանք է պարգևում՝ միևնույն ժամանակ իր հետ բերելով դժվարությունների մի ամբողջ շարան: Այդ խնդիրներն առավել ակնառու են դառնում, երբ ընտանիքում ծնվում է հատուկ կարիքներ ունեցող երեխա, կտրուկ փոխվում է ծնողների կյանքը, դառնում ցնցումներով և սթրեսներով լի:

Երբ ընտանիքում ծնվում է հենաշարժական կամ այլ ակնառու խնդիրներ ունեցող երեխա, ծնողները տեղեկանում են այդ մասին ծննդաբերությունից անմիջապես հետո և չեն հասցնում պատրաստվել այդ նորությանը. ոչ ակնառու խնդիրները ծնողները նկատում են շատ ավելի ուշ: Այդ պահին ծնողները կարծես երջանկության սպասումների բարձունքից վայր են ընկնում հիասթափության անդունդը:

Նշված ընտանիքներն բնութագրվում են հետևյալ առանձնահատ-

կույթուններով.

1. Խայթարվում են այդ ընտանիքների փոխհարաբերությունները հասարակության տարբեր շերտերի հետ /բարեկամներ, ծանոթներ, բժիշկներ, մանկավարժներ և այլ մասնագետներ/:
2. Նկատելի են դառնում խնդիրները միջամուսնական փոխհարաբերություններում, կտրուկ փոխվում է հատկապես հայրիկների կարգավիճակը, ծայրահեղ դեպքում՝ լքում են ընտանիքը՝ խուսափելով ստեղծված իրավիճակից:
3. Նվազում է վերարտադրվելու ցանկությունը, ծնողները հաճախ չեն ցանկանում կրկին երեխա ունենալ:

Հոգեբանները առանձնացնում են ծնողների հնարավոր հակազդումների հետևյալ փուլերը.

1. Շոկային իրավիճակ, մոլորություն, անորոշության և տագնապի զգացում
2. Երեխայի ախտորոշման հերքում
3. Ախտորոշման ընդունում և վերջինիս հետ կապված ընկճախտ
4. Խնդրի ընդունում և գիտակցված ցանկություն՝ դիմել մասնագետների օգնությանը:

Երեխայի խնդիրների հետևանքով ծնողները հայտնվում են սթրեսային տևական վիճակում. շատերի մոտ հավելվում է մեղքի և ամոթի զգացումը, նվազում է ինքնագնահատականը, ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որոշ ծնողներ նախընտրում են թաքցնել խնդիրը և փախչել իրականությունից: Հաճախ նրանք ունենում են իրականության անհամապատասխանության զգացում, և նրանց թվում է, որ դա անիրական մի երագ է, և նման բան չի կարող կատարվել իրենց հետ: Մեկ այլ դեպքում ժխտում են իրավիճակը և մասնագետի կողմից տրված ախտորոշումը՝ կարծելով, թե բժիշկները սխալվում են: Երբ ծնողը հասկանում է, որ երեխան տարբերվում է հասակակիցներից, սկսում է հավաքագրել ինֆորմացիա տարատեսակ կայքերից, մասնագետներից, ծնողներից և այլն: Նրան թվում է, թե երեխայի զարգացումը փոքր-ինչ ուշանում է:

Այս փուլին հաջորդում է ընկճախտով և բացասական հուզական ապրումներով լեցուն մի շրջան, երբ կարծես կյանքը կանգ է առնում և

ավարտվում: Նրանք չարանում են կյանքի հանդեպ, որ այդպիսի փորձության առջև են կանգնել: Համակվում են անպետքության զգացումով, քանի որ չեն կարողացել լույս աշխարհ բերել առողջ երեխա: Ժամանակ առ ժամանակ նրանց մոտ ծագում են երեխայից հրաժարվելու մտքեր, ինչն ավելի է սրում մեղքի զգացումը:

Որոշ ժամանակ անց ոմանք ի վերջո ընդունում են երեխայի խնդիրը և դիմում մասնագետների օգնությանը, իսկ ոմանք էլ դժվարանում են ինքնուրույն հաղթահարել խնդրի ընդունմամբ պայմանավորված ապրումները և անդադար «պայքարի մեջ են գտնվում» իրենց և երեխաների հետ: Նման դեպքերում մասնագետի աջակցությունն անհրաժեշտություն է:

Այս երեխաների ծնողների հետ աշխատելիս առաջին քայլը պետք է լինի վստահելի և ապահով հարաբերությունների ստեղծումը, քանի որ նրանք շատ խոցելի են և դժվարանում են վստահել մարդկանց: Մասնագետը զգուշորեն պետք է փորձի ներկայացնել երեխայի դժվարությունները, նկարագրի նրա առանձնահատկությունները, տրամաբանված ինֆորմացիա տրամադրի երեխայի հուզավարքային դրսևորումների վերաբերյալ՝ միաժամանակ շեշտելով, որ երեխայի հետ արդյունավետ աշխատանքի դեպքում կլինեն դրական փոփոխություններ: Ցանկալի չէ ծնողի հետ խոսել անհասկանալի, վախ ներշնչող տերմինաբանությամբ և պարբերաբար շեշտել երեխայի ախտորոշումը: Եթե ծնողը պնդում է, որ ցանկանում է ախտորոշման մասին տեղեկանալ, հոգեբանը պետք է ուղղորդի հոգեբույժի մոտ, քանի որ նրանք են իրավասու տալ հիվանդության ախտորոշումներ: Միաժամանակ մասնագետը կարող է հայտնել, որ երեխայի ախտորոշման իմացությունը չի ավելացնելու կամ նվազեցնելու նրա հետ աշխատելու իրենց պատրաստակամությունը և ծնողների հոգատարությունն ու սերը երեխայի հանդեպ, և, անկախ ախտորոշումից, նրանք սիրում են իրենց երեխային այնպիսին, ինչպիսին նա կա: Ցանկալի է, որ մասնագետը ծնողին մատնացույց անի ոչ թե իրողության անդառնալիությունը, այլ երեխայի հնարավորությունների սահմաններում խնդրի հաղթահարման տարբերակներն ու աշխատանքային մոտեցումները:

Ծնողներին տրվող հոգեբանական աջակցության նպատակներից է

նաև աշխատանքը նրանց բացասական հուզական ապրումների հետ: Կարելի է առանձնացնել հաճախ հանդիպող մի քանի իրավիճակներ.

1. Ծնողների անկայուն հուզական վիճակները պայմանավորված են այն տհաճ գիտակցումով, որ աշխարհի ամենասիրելի էակն «անբուժելի հիվանդ է» և միշտ կտարբերվի իր հասակակիցներից ու դժվար թե արդարացնի ծնողների սպասումները: Նրանց պատում է աննկարագրելի վշտի մի զգացում, որը ժամանակի ընթացքում թեև ունենում է վայրիվերումներ, սակայն ամբողջությամբ չի անհետանում: Շատ ծնողներ խոստովանում են, որ վշտի այդ զգացումը կարծես չարացրել է նրանց, ոմանք էլ նշում են, որ դարձել են առավել համբերատար շրջապատի հանդեպ և փոխվել են կյանքի նկատմամբ նրանց հայացքներն ու արժեքները:
2. Հոգեցունց ապրումների հաջորդ պատճառը ծնողներին անդադար տանջող հարցն է՝ «ինչո՞ւ հենց ինձ հետ եղավ այս ամենը, ինչո՞ւ հենց իմ երեխայի հետ նման բան պետք է լիներ» և այլն: Հաճախ ծնողները իրենց նույնացնում են երեխայի հետ և չեն կարողանում տարանջատել և ընկալել նրանց՝ որպես անհատի, որն ունի իր առանձնահատկություններն ու դրսևորումները: Եվ որքան այդ նույնացումը արտահայտված է, այնքան ծնողները համակվում են անելանելիության, ամոթի զգացումով, կարծես թե այդ առանձնահատկությունների կրողները ոչ թե երեխաներն են, այլ հենց իրենք:
3. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին բնորոշ հոգեբանական խնդիրներից է մեղքի զգացումը և մեղավորների որոնումը: Նրանք հաճախ են մեղադրում միմյանց, փնտում մեղավորներ հարազատների, բժիշկների սխալ մոտեցումների, պատվաստումների, համակարգիչների և այլնի մեջ: Բնականաբար այդպես նրանք փորձում են պաշտպանել իրենց առկա սթրեսային իրավիճակում: Ուստի նման դեպքերում ծնողների հետ աշխատելիս նրանց պետք է կենտրոնացնել ոչ թե խնդրի ծագման պատճառահետևանքային կապերի վերլուծության, այլ երեխային օգնելու, դժվարությունները հաղթահարելու և լավագույն արդյուքներին հասնելու ցանկության վրա:

Վարժությունների իրականացում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հոգեբանական բնութագիրը ներկայացնելուց հետո վարողը մասնակիցների հետ միասին քննարկում է հետևյալ պնդումները՝ վերլուծելով, թե որն է նպատահարմար և արդյունավետ կիրառելի աշխատանքի ընթացքում, իսկ որը՝ ոչ:

1. Ծնողների հետ առաջին հանդիպման ընթացքում մասնագետը պետք է ապրումակցի նրանց, նշելով, որ հասկանում է, թե որքան ծանր հոգեվիճակում են նրանք գտնվում, որքան բարդ խնդրի առջև են կանգնած և ինչքան դժվարություններ են սպասվում այդ երեխային իր կյանքի ընթացքում:
2. Առաջին հանդիպման ընթացքում մասնագետը պետք է փորձի հնարավորինս լսել ծնողներին, բացահայտել նրանց ապրումները, արտահայտվելու հնարավորություն ընձեռել և ստեղծել փոխվստահության մթնոլորտ:
3. Հոգեբանը ծնողներին ուղղակի կերպով պետք է հնարավորինս մանրամասն ինֆորմացիա փոխանցի երեխայի առանձնահատկությունների, հուզական և վարքային դրսևորումների մասին՝ իր մասնագիտական փորձի և խնդրի վերաբերյալ գրականության տեղեկատվության վրա հիմնվելով:
4. Հոգեբանը երեխայի առանձնահատկությունների վերաբերյալ հարցերի միջոցով ծնողներին պետք է առավել ակնառու դարձնի երեխայի բնութագիրը և նման կերպով խնդրի վերաբերյալ ինֆորմացիան դարձնի առավել հասանելի և մատչելի՝ հնարավորություն տալով ծնողներին սեփական եզրահանգումներով տեղեկանալ երեխային բնորոշ հուզավարքային դրսևորումների մասին:
5. Հատուկ կարիքներ ունեցող երեխայի ծնողների հետ աշխատելիս մասնագետը պետք է նրանց ուշադրությունը կենտրոնացնի հիվանդության պատճառահետևանքային կապերի բացահայտման և ավտորոշման վրա, քանի որ դա չափազանց կարևոր է:
6. Մասնագետը նման ծնողների հետ աշխատելիս պետք է նրանց ուշադրությունը բևեռի երեխայի մոտ դրսևորվող առանձնահատկությունների, աշխատանքային մոտեցումների և դժվարությունների

հաղթահարման ուղիների վրա:

7. Ծնողին կարևոր է տեղեկացնել, որ աշխատանքը երկարատև բնույթ է կրելու, և պետք է համբերատար սպասել, չհիասթափվել և ուրախանալ ու ոգևորվել ամեն մի փոքր փոփոխությամբ:
8. Անհրաժեշտ է ծնողին նշել, որ երեխայի հետ իրականացվող աշխատանքները շատ արագ կտան ցանկալի արդյունքներ, և կարճ ժամանակահատվածում երեխան կունենա մեծ առաջխաղացումներ:

Վերոնշյալ պնդումները քննարկելուց հետո վարողը առաջարկում է ևս մեկ վարժություն, որն ունի հետևյալ բովանդակությունը. մասնակիցները բաժանվում են խմբերի, և յուրաքանչյուր խմբին տրվում է 15 րոպե ժամանակ, որպեսզի նրանք պատկերացնեն և նշումներ կատարեն, թե ինչպես կարող են իրենք առավել արդյունավետ ներկայացնել ծնողներին հատուկ կարիքներ ունեցող երեխայի խնդիրն ու առանձնահատկությունները՝ տրամադրելով նրանց բավարար ինֆորմացիա և արթնացնելով նրանց մեջ համագործակցության մեծ ցանկություն: Խմբերից մեկը վերագրում է իրեն աուտիզմ ունեցող երեխայի, մյուսը՝ մտավոր զարգացման խանգարումներ, հաջորդը՝ հենաշարժական խնդիրներ ունեցող երեխայի հոգեբանի դերը և այլն: Հաջորդիվ խմբերը բարձրաձայնում են կամ խաղարկում խնդրի ներկայացման իրենց մոտեցումները, որն ավարտվում է քննարկումներով և վերլուծություններով:

Ամփոփում:

Քննարկումներից հետո վարողը ամփոփում է հանդիպումը և առաջադրում մասնակիցներին մեկ շաբաթվա ընթացքում մտածել հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողներին հասցեագրված տարբեր հաղորդագրություններ, որոնց յուրացումն անհրաժեշտ է արդյունավետ աշխատանքների իրականացման համար:

Հանդիպում իններորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Գործնական առաջարկներ
4. Վարժությունների իրականացում
5. Ամփոփում:

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Վարողը կրկին անգամ ողջունում է մասնակիցներին, խրախուսում նրանց ներկայությունն ու մասնակցությունը նշված թրեյնինգին, առաջարկում կիսվել իրենց տպավորություններով և ապրումներով: Այնուհետև անդրադառնում է առաջադրանքին՝ խնդրելով յուրաքանչյուր մասնակցի ներկայացնել իր մտքերը՝ կապված հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողներին հասցեագրված հաղորդագրությունների հետ:

Գործնական առաջարկներ:

Մասնակիցների կարծիքները լսելուց հետո վարողը ներկայացնում է ծնողների հետ աշխատանքի արդյունավետությանը նպաստող մի քանի կարևոր գործնական առաջարկներ:

- Ծնողները միշտ պետք է հիշեն, թե որքան են սիրում իրենց երեխային, թե որքան կարևոր են նրանք միմյանց համար: Նրանք պետք է գիտակցեն, որ ինչպիսին էլ լինեք իրենց երեխան, նրանք ուրախանալու էին նրա գոյությամբ նույն կերպ և լցված էին լինելու նման անսահման սիրով:
- Ծնողները պետք է փորձեն ապրել ներկայով և չկանխատեսել հեռավոր ապագան:
- Նրանք պետք է կենտրոնանան երեխայի հաջողությունների և ձեռքբերումների վրա և ուրախանան նույնիսկ չնչին փոփոխության դեպքում՝ երբեք չհամեմատելով իրենց երեխային մյուսների հետ:
- Ծնողները, երեխային սիրելով հանդերձ, պետք է փորձեն չծուլվել երեխայի խնդրին, չնույնանալ նրա հետ և չանտեսել սեփական հետաքրքրությունները: Նրանք երեխային պետք է ընկալեն որպես

առանձին էակի, որն ունի իր տարատեսակ յուրահատկությունները: Ծնողները ժամանակ առ ժամանակ պետք հանգստանան և վերականգնեն իրենց ուժերը, քանզի դրանից կշահի իրենց երեխան:

- Ծնողները չպետք է կասկածեն իրենց ծնողական կարողությունների վրա, քանի որ իրենց դերը երեխայի կյանքում անփոխարինելի է, և նույնիսկ ամենաարհեստավարժ մասնագետը այդքան լավ չի կարող ճանաչել ու հասկանալ երեխային, որքան իրենք: Ծնող-մասնագետ արդյունավետ համագործակցության դեպքում է հնարավոր հասնել ցանկալի արդյունքների:

Վարժության իրականացում:

Գործնական առաջարկներն ամփոփելուց հետո մասնագետը նշում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ աշխատելիս խնդրի ընդունման վարժությունները նախընտրելի է կիրառել ծնողական խմբերում: Ցանկալի է, որ ծնողները շփվեն նմանատիպ խնդիրներ ունեցող այլ մարդկանց հետ, կիսվեն սեփական ապրումներով, քանի որ նրանք առավել խորությամբ են հասկանում միմյանց հույզերն ու ապրումները: Հաջորդիվ ներկայացնում է խնդրի ընդունման ուղղված վարժություն այդ երեխաների ծնողների հետ: Նախքան բուն վարժության իրականացումը ցանկալի է ծնողների հետ միասին քննարկել երեխայի խնդրի ընդունման ընթացքը և հղել նրանց հարցեր հետևյալ բովանդակությամբ՝ «ինչպե՞ս է ընթացել երեխայի խնդրի ընդունման գործընթացը, ի՞նչ փուլերով», «ինչպե՞ս են ծնողներն այժմ վերաբերվում երեխայի խնդրին», «ինչպիսի՞ն խորհուրդներ կարելի է տալ մյուս ծնողներին, որոնք հայտնվել են նմանատիպ իրավիճակում», «ինչի՞ն է նպաստում խնդրի ընդունումը, ի՞նչ է տեղի ունենում նրանց հետ, երբ չեն ընդունում ստեղծված իրավիճակը»: Ծնողների մեկնաբանություններն ու վերլուծությունները լսելուց հետո վարողը ծնողներին խնդրում է պատկերացնել հետևյալ իրավիճակը:

Իրավիճակ

Սիրելի ծնողներ, խնդրում են պատկերացնել, որ ձեզ հրավիրել են լայն լսարան ունեցող մի հեռուստաընկերություն, որի հաղորդումները դիտում են աշխարհով մեկ, և դուք ուղիղ եթերով պետք է ուղերձ

հղեք համայն հանրությանը: Ձեր ուղերձը պետք է ուղղել աշխարհի բոլոր ծնողներին, ովքեր ունեն յուրահատուկ երեխաներ, ինչպես նաև այն մարդկանց, ովքեր ապրում են այդ երեխաների հետ նույն միջավայրում: Քանի որ բոլորը տեսնում են ձեզ, փորձեք ուղերձը կառուցել այնպես, որ հնարավորինս վերափոխեք նրանց ընկալումը, որպեսզի ծնողները, լսելով ձեզ, դրական տրամադրվեն ու փորձեն դուրս գալ ստեղծված իրավիճակից, իսկ շրջապատի մարդիկ ընդունեն նրանց՝ որպես հասարակության լիիրավ անդամի:

Ուղերձը գրելու համար ծնողներին տրվում է A4 ձևաչափի թղթեր և գրիչներ և 20 րոպե ժամանակ՝ մտքերը ձևակերպելու և գրի առնելու համար: Հաջորդիվ յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է իր ուղերձը, իսկ մյուսները համբերատար սպասում են իրենց հերթին: Երբ բոլորն ավարտում են, շարունակվում է քննարկումը, և ծնողները ներկայացնում են իրենց ապրումները ուղերձը գրելիս և իրենց եզրահանգումները այդ ամենից հետո:

Ամփոփում:

Թրեյնինգավարը ամփոփում է հանդիպումը և ծնողների հետ աշխատող մասնագետներին առաջադրում մեկ շաբաթվա ընթացքում ստեղծել խնդրի ընդունման վերաբերյալ տարբեր վարժություններ, որոնք կիրառելին կլինեն ծնողների հետ աշխատելիս:

Հանդիպում տասերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Ապրումակցման դերը ծնող-մասնագետ փոխհարաբերություններում
4. Վարժության իրականացում
5. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Թրեյնինգավարն անդրադառնում է նախորդ հանդիպման տպավորություններին և խնդրում մասնակիցներին ներկայացնել ծնողների հետ իրականացվելիք իրենց վարժությունները խնդրի ընդունման վերաբերյալ:

Ապրումակցման դերը ծնող-մասնագետ փոխհարաբերություններում:

Վարողը նշում է, որ տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ծնողների հետ համագործակցելիս ցանկալի արդյունքի հասնելու համար կարևոր են ոչ միայն ծնողների անձնային առանձնահատկությունների, արժեհամակարգի վերափոխմանն ուղղված գործընթացները, այլ նաև սեփական մասնագիտական կարողությունների և անձնային որակների զարգացումը: Որպես անհրաժեշտություն պետք է նշել ապրումակցման ունակության, իրավիճակը դիմացինի աչքերով տեսնելու կարողության զարգացումը: Մասնագետը, որը դժվարանում է զգալ և պատկերացնել իրեն հոգեբանական խնդիրներ կամ զարգացման խանգարումներ ունեցող ծնողի դերում, կոժվարանա նաև համագործակցել և աջակցել այդ ծնողին: Ապրումակցման ունակությունը զարգացնել չի նշանակում ծնողին հավասար տառապել կամ խղճալ նրան և միասին արտասվել: Այն առավել խորքային առանձնահատկություն է, որը ենթադրում է իրավիճակի ընկալում ծնողի տեսանկյունից, ծնողի աչքերով, ինչը հնարավորություն է տալիս դինամիկ դարձնել երեխայի խնդրի ընկալման հենակետը և տեսնել ավելին, քան կարող ես:

Վարժության իրականացում:

Ապրումակցման կարևորությունը ներկայացնելուց հետո վարողը առաջարկում է իրականացնել մասնագետների ապրումակցման ունա-

կության զարգացմանն ուղղված շատ հետաքրքիր մի վարժություն: Նա նախօրոք կազմում է հոգեբանական խնդիրներ և զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների նկարագրեր՝ թվով 8 հատ, և հանդիպման ժամանակ ընթերցում յուրաքանչյուր բնութագիրը հատ առ հատ: Մասնակիցներին առաջադրվում է համակ ուշադրությամբ լսել ամեն մի խոսքը և փորձել ամենայն մանրամասնությամբ պատկերացնել իրենց այդ խնդիրն ունեցող երեխայի ծնողի դերում՝ պատկերացնելով, որ դա իրենց երեխան է, նրանք ապրում են այդ երեխայի հետ և անցնում են այդ ծնողի կյանքի ճանապարհը, միևնույն ժամանակ՝ գիտակցելով և չկորցնելով սթափությունը, որ իրականում նրանք մասնագետներ են, որոնք պետք է աջակցեն այդ ծնողներին: Այս պահին նրանց մասնագետ լինելու փաստը վարողը պարբերաբար հիշեցնում է վարժության ընթացքում:

Յուրաքանչյուր նկարագրի ընթերցմանը և վերլուծությանը տրվում է 10-15 րոպե, ինչի հետևանքով այս հանդիպումը կարող է փոքր-ինչ երկար տևել:

Հոգեբանական խնդիրներ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների նկարագրերը ընթերցելուց հետո մասնակիցները ըստ ցանկության արտահայտում են իրենց հույզերն ու մտքերը, ներկայացնում՝ որքանով էր դյուրին պատկերացնել իրենց այդ երեխաների ծնողի դերում, հասկանալ ծնողների հոգեվիճակը, նրանց տեսակետը իրենց երեխաների խնդրի վերաբերյալ: Վարողը խնդրում է մասնակիցներին ներկայացնել այդ ծնողների ապրումները, կենսակերպը, հայացքները, վերաբերմունքը և այլն: Այնուհետև կարևոր է լսել նաև մասնագետների կարծիքը ծնողների դժվարությունների հաղթահարման վերաբերյալ՝ ինչպես կվարվեին նրանք այդ ծնողի դերում, ինչ խորհուրդ կտային նրան: Վարժության քննարկման ընթացքում հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ մասնակիցները արտասվում են, հուզվում. պատճառը նույնացումն է ծնողի և նրա ապրումներ հետ: Այս դեպքում վարողը պետք է հիշեցնի, որ մասնակիցը մասնագետ է, որը պետք է իր սթափությամբ աջակցություն ցուցաբերի ծնողին:

Ստորև ներկայացված են զարգացման տարբեր խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների նկարագրերը:

Աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխայի նկարագիր

Դավիթը 12 տարեկան է, հաճախում է դպրոց: Վաղ հասակում նրա մոտ ախտորոշվել է աուտիզմ: Երեխան չի խոսում, միայն արտաբերում է որոշ հնչյուններ: Շատ է սիրում շոկոլադե և հնդկաձավար, ամեն օր ծնողներից պահանջում է իր սիրելի ուտելիքները: Նա չափազանց զգայուն է ձայների նկատմամբ, աղմուկի ժամանակ փակում է ականջները և բարձրաձայն բղավում: Այդ պահին շրջապատի մարդիկ զարմանքով նայում են նրան և սաստում ծնողին՝ խնդրելով առավել ուշադիր լինել երեխայի հանդեպ: Դավիթը դժվարանում է երթևեկել հասարակական փոխադրամիջոցներով, երբ այն խիտ է մարդկանցով, ավտոբուսի մեջ նա անդադար տարուբերում է մարմինը, անորոշ ձայներ արձակում, տազնապում և հարվածում ինքն իրեն: Նման վարք նա դրսևորում է գրեթե բոլոր վայրերում, որտեղ կան մարդիկ: Իսկ մարդիկ խուսափում են նրանից՝ մտածելով, որ կվնասի նաև իրենց: Մայրիկը փորձում է հանգստացնել Դավիթին, սակայն նա կծում է նրա ձեռքը և գլխով հարվածում կրծքավանդակին: Դավիթն ունի սիրելի խաղալիք՝ իր կապույտ մեքենան, որը դարձել է նրա անբաժան ուղեկիցը, և երբ մանկավարժները փորձում են վերցնել այն իր ձեռքից, պառկում է հատակին և գլուխը հարվածում գետնին: Նրա մոտ ակտիվացել են սեռական հետաքրքրությունները, դասարանում անսպասելի կարող է զբաղվել ձեռնաշարժությամբ: Ուսուցչուհին ծնողներին ահազանգում է իրենց երեխայի նման վարքագծի մասին, առաջարկում պատժամիջոցներ կիրառել և ուղղորդում է հոգեբույժի մոտ: Ընտանիքում կա փոքրիկ եղբայր, որը կրկնօրինակում է Դավիթի վարքաձևերը՝ հարվածում է ինքն իրեն, դրսևորում կամակոր վարքագիծ՝ մտածելով, որ այն ինչ թույլատրվում է եղբորը, կարելի է նաև իրեն: Մայրը չի աշխատում և զբաղվում է երեխաների խնամքով: Տան միակ աշխատողը հայրն է, սակայն նրա վաստակած գումարը միայն բավարարում է սնունդ հայթայթելուն:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխայի նկարագիր

Աղջիկը 15 տարեկան է, հաճախում է դպրոց: 4 տարեկանում նրա մոտ արձանագրվել է մտավոր զարգացման ցածր մակարդակ և ախ-

տորոշվել չափավոր մտավոր հետամնացություն: Արևիկը խոսում է, սակայն մտքերը կապակցված չեն մեկը մյուսի հետ, չի գիտակցում իր արարքների հետևանքները, կարող է չիմաստավորված հարցեր տալ անձանոթ մարդկանց, առանց պատճառի բարձրաձայն ծիծաղել: Նա շատ բարի է և սիրում է շփվել: Մարդկանց հանդիպելիս զարդեր և հագուստներ է ուզում նրանցից, իսկ երբ նվերներ է ստանում, զգում է գետը: Ամեն առավոտ մայրիկից թաքուն թխկացնում է հարևանի դուռը և սուրճ խնդրում նրանից, հարևանը տեղեկացնում է այդ մասին մայրիկին, իսկ նա ամաչում է աղջկա պահվածքի համար: Հաճախ մյուսներին պատմում է իր երբեմնի անիրական սիրո մասին, իսկ նրանք էլ ծաղրում են Արևիկին: Երբեմն էլ միտումնավոր կանչում են նրան իրենց տուն և տարբեր հարցեր տալիս ու ծիծաղում նրա պատմությունների վրա: Հաճախ նա առանց ծնողներին զգուշացնելու հեռանում է տանից, իսկ ծնողներն անհանգստացած որոնում են նրան: Երբ բացատրում են արարքի հետևանքները, նա բարձրաձայն ծիծաղում է: Նրան շատ հեշտ է խաբել և մոլորեցնել, քանի որ բավականին դյուրահավատ է, և անբարեխիղճ մարդիկ կարող են շահագործել նրան: Երեխան անդադար պետք է լինի ծնողների վերահսկողության ներքո, քանի որ կարող է կատարել տարբեր չմտածված գործողություններ, օրինակ՝ տղաների մոտ մերկանալ և պարել կամ այլ մարդկանց հրահանգով խանութից ինչ-որ բան գողանալ: Դպրոցում հանգիստ է, սակայն չի կարողանում հաշվել, կարդալ և գրել: Դասընկերները ծաղրում են նրան, մի օր էլ նրա մեջքին փակցրել են «ես գիժ եմ, ինձանից հեռու մնացեք» արտահայտությունը: Ծնողները, տեղեկանալով այդ մասին, զանգահարել էին մյուս երեխաների ծնողներին և վիճաբանել նրանց հետ:

Ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ ունեցող երեխայի նկարագիր

Երեխան 5 տարեկան է, հոգեբույժները ախտորոշել են ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ: Խոսում է, սակայն խոսքը հաճախ անհասկանալի է: Դեռ վաղ հասակից Արսենը անհանգիստ երեխա էր, անդադար շարժվում էր, ցատկում էր աթոռին, այնտեղից՝ սեղանին և հաճախ վնասում էր իրեն՝ ստանալով տարբեր

Մասնավորապես: Հիմա էլ ոչինչ չի փոխվել, նա չի կարողանում ինչ-որ գործով երկար զբաղվել, կամ խաղալ, հեշտությամբ շեղվում է մի գործողությունից մյուսին: Իսաղի ժամանակ հարվածում է, կծում հասակակիցներին, խլում նրանցից խաղալիքները, չի յուրացնում խաղի կանոնները, անում է այն, ինչ ուզում է և պահանջում մյուսներից կատարել իր ցանկությունները: Մի օր խաղալիքը նետել էր և կոտրել պատուհանի ապակին: Շրջապատի մոտ թողնում է անդաստիարակ երեխայի տպավորություն, և բոլորը մեղադրում են ծնողներին երեխայի նման պահվածքի համար: Հյուր գնալիս չի գիտակցում վարքի սահմանները. բացում է պահարանի դռները, քանդում և կոտրում տարբեր իրեր, ծնողները պտտվում են նրա հետևից, որպեսզի հնարավորինս վերահսկեն նրա վարքը, ընթացքում մայրիկն անընդհատ շիկնում է, լարվում հարազատների հայացքներից, սաստում երեխային, սակայն ապարդյուն: Հաճախում է մանկապարտեզ, սակայն չի ճանաչում թվերը, գույները, կենդանիներին: Երբ բոլորը նստած ճաշում են, նկարում կամ այլ առաջադրանքներ կատարում, Արսենն անդադար պտտվում է սենյակում: Նա չի կարողանում բացատրել իր ցանկությունները և խոչընդոտների հանդիպելիս լաց է լինում, ցուցաբերում տարբեր կամակորոպություններ: Արսենը հաճախ ունենում է քնի խանգարումներ, քնի մեջ բղավում է: Առկա են տիկեր բերանային հատվածում: Նկատվում է մկանային լարվածություն և բարձր տազնապայնություն, վեր է թռչում տարբեր ձայներից, անհանգիստ շարժումներ կատարում:

Հուզականային ոլորտի խնդիրներ ունեցող երեխայի նկարագիր

Տղան 9 տարեկան է: Ապրում է բազմանդամ ընտանիքում և չունի քույր ու եղբայր: Շատ սիրված և սպասված երեխա է, և ընտանիքի բոլոր անդամները պատրաստ են կատարել երեխայի յուրաքանչյուր ցանկություն և բավարարել ցանկացած քմահաճույք: Մայրիկը չի աշխատում և իր կյանքի ներկայիս իմաստը կապում է երեխայի խնամքի հետ. նա հագնվում է, վլացվում է, լողանում է, զուգարանից օգտվում է միայն մայրիկի օգնությամբ: Նրան լողացնում է մայրը, այն էլ շատ մեծ դժվարությամբ, քանզի խուսափում է ջրից, լարվում ու նյարդայնանում: Քնում է ծնողների անկողնում և հրաժարվում է անգամ նույն

սենյակում, բայց առանձին մահճակալի մեջ քնել՝ պատճառաբանելով, որ վախենում է: Անգամ ցերեկվա ժամերին հրաժարվում է մենակ մնալ սենյակում, իսկ առավոտյան, երբ արթնանում է ու նկատում, որ ծնողներն արդեն դուրս են եկել սենյակից, մեծ աղմուկ է բարձրացնում՝ ամեն անգամ խնդրելով անպայման իրեն էլ արթնացնել և միասին սենյակից դուրս գալ: Երբեմն սարսափազդու երազներ է տեսնում: Երեխան դժվարանում է ուշադրությունը կենտրոնացնել առաջարկվող առաջադրանքների վրա, զրուցելիս խուսափում է նայել զրուցակցի աչքերին, անընդմեջ անհանգիստ քայլում է սենյակում: Երեխան ողջ օրվա ընթացքում հիմնականում նախընտրում է համակարգչային խաղեր խաղալ և մուլտֆիլմեր դիտել: Վերջիններս սահմանափակելու դեպքում ցուցաբերում է արտահայտված կամակորոթություն. լացում է, գոռում է, պառկում է հատակին, սադրում, որ այլևս դպրոց չի գնա և դաս չի սովորի: Հրաժարվում է ինքնուրույն բակ իջնել, թեպետ ընտանիքի անդամները նույնպես կարծում են, որ երեխան դեռ փոքր է և պատրաստ չէ մենակ բակ իջնել կամ խանութ գնալ: Վերջին ժամանակներս հրաժարվում է դպրոց գնալ, թեպետ ցանկության դեպքում ցուցաբերում է բարձր առաջադիմություն, ծայրահեղ դեպքում համաձայնվում է միայն մի պայմանով, եթե մայրիկը դասասենյակում կնստի իր կողքին՝ պատճառաբանելով, որ վախենում է:

Հենաշարժական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների նկարագիր

Մարիամը 16 տարեկան է, երբ նա ծնվեց, բժիշկները հայտնեցին ծնողներին, որ երեխայի մոտ ախտորոշվել է մանկական ուղեղային կաթված:

Երեխան չի կարողանում ինքնուրույն տեղաշարժվել, հիմնականում միևնույն կծկված, ներարգանդային վիճակ հիշեցնող դիրքով նստած է հենասայլակին: Դժվարանում է ինքնուրույն ձեռքում պահել որևէ առարկա անկախ չափից:

Չի կարողանում խոսել, հիմնականում լուռ է և անձայն, հազվադեպ կարող է լացել, կամ ինչ-որ ձայներ արտաբերել որևէ պահանջ արտահայտելու համար: Ժպիտով արձագանքում է բարձր ձայներին կամ վառ

լույսին:

Մարիամը չի արձագանքում իր անվանը, չի ճանաչում շրջապատի մարդկանց: Խաղերի նկատմամբ որևէ հետաքրքրություն չի ցուցաբերում, չունի որևէ նախասիրություն: Երեխան դժվարանում է ընդօրինակել նույնիսկ վարքի պարզ ձևերը, միայն ուտելու պահանջի դեպքում բերանը սկսում է շարժել և ձայներ արձակել: Գրեթե անհնար է թեկուզ կարճ ժամանակով նրա ուշադրությունը կենտրոնացնել որևէ ազդակի վրա:

Երեխային կերակրում են տրորած և փխրեցված սնունդով, ինչը միայն կուլ է տալիս: Մշտապես կրում է տակդիր:

Փոքր հասակում երեխայի ծնողների մոտ նրանից հրաժարվելու մտքեր էին առաջանում, սակայն վերջ ի վերջո նրանք չկարողացան դա անել, քանի որ շատ կապվել էին Մարիամի հետ: Նրանք ամեն միջոց չէին խնայում երեխային օգնելու համար, սակայն ջանքերն ապարդյուն էին: Ծնողների համար ամենանշանակալի ձեռքբերումը երեխայի ժպիտն էր, երբ տեսնում է իրենց:

Մտերիմներն ու հարազատները նույնպես օգնում են ծնողներին, սակայն նրանք հոգնել են խղճահարությամբ լի հայացքներից:

Շփման և հաղորդակցման խնդիրներ ունեցող երեխայի նկարագիր

Գայանեն 7,5 տարեկան է և արդեն հաճախում է դպրոց: Ինչպես մանկապարտեզում, այնպես էլ դպրոցում դժվար է հարմարվել. մանկապարտեզ հաճախել է մոտ մեկ տարի, սակայն միշտ գնացել է դժկամությամբ, խուսափել է հասակակիցների հետ շփումներից: Նա նստում էր սենյակի անկյունում և լուռ հետևում ընկերների խաղին, իսկ երբ փորձում էին խաղալ նրա հետ, ընդդիմանում էր և ավելի ամփոփվում իր մեջ: Մանկապարտեզի ցերեկություններին գրեթե չի մասնակցել, իսկ մասնակցելու դեպքում էլ անձայն կանգնել է և հրաժարվել արտասանել կամ երգել: Մայրիկը անհամբեր սպասում էր, երբ պետք է գա այն օրը, որ մյուսների նման Գայանեն էլ կուրախացնի իրեն: Սակայն, ի վերջո 5 տարեկանում նա ընդհանրապես հրաժարվեց հաճախել մանկապարտեզ: Ընտանեկան տոներին նույնպես մեկուսանում է և փակվում

սենյակում, հրաժարվում բարևել և հրաժեշտ տալ ինչպես հասակակիցներին, այնպես էլ մեծահասակներին: Ծանոթների հետ զրույցի մեջ դժվարությամբ է մտնում, տրվող հարցերին շատ հաճախ տալիս է հակիրճ պատասխաններ, իսկ անծանոթների հետ առհասարակ կոնտակտի մեջ չի մտնում: Առաջին դասարան հաճախել է մեծ դժվարությամբ, մոտ երկու ամիս ծնողը երեխայի հետ նստել է դասի, սակայն մինչ օրս երեխան դեռ չի հարմարվել և առավոտյան լաց է լինում դպրոց գնալիս: Դասընկերների հետ խուսափում է շփվել, ինչպես նաև հրաժարվում է պատասխանել ուսուցչուհու հարցերին, մոտենալ գրատախտակին և այլն: Մեծ ցանկություն ունի հաճախել ժամանցի վայրեր, սակայն այնտեղ մայրիկի ձեռքը բաց չի թողնում և շփման նախաձեռնություն չի ցուցաբերում: Հրաժարվում է գնալ բակ: Ծնողները դիմել են տարբեր մասնագետների, սակայն աղջիկը փախչում է նրանցից և հրաժարվում ինչ-որ բանով զբաղվել: Հայրիկը հաճախ զայրանում է նրա վրա, փորձում նրան վերափոխել, բայց ապարդյուն:

Անապահով ընտանիքի երեխայի հոգեբանական նկարագիր

Անահիտը 8 տարեկան է, նրա ընտանիքը բաղկացած է 5 հոգուց՝ հայրը, մայրը, 2 եղբայրները և ինքը: Հայրիկը շուրջ 2 տարի է անկողնային հիվանդ է, տան միակ աշխատողը մայրն է, որն աշխատում է խանութում որպես վաճառողուհի: Նա վաստակում է 60000 դրամ աշխատավարձ, որի կեսը ծախսում է ամուսնու դեղորայքի հայթայթման վրա: Մայրիկը հաճախ տանը չի լինում և վերադառնում է ուշ երեկոյան: Նա շատ է տխրում, սակայն այլ տարբերակ չի գտնում: Ընտանիքը հագիվ է կարողանում ապահովել իր գոյությունը: Ապրում են կիսաքանդ մի տնակում, որտեղ չկան կեցության տարրական պայմաններ: Փոքր եղբայրների և տան խնամքը իրականացնում է Անահիտը, ինչի պատճառով հաճախ բացակայում է դասերից: Կրտսեր եղբայրը 2 տարեկան է, մանկապարտեզ չի հաճախում, և աղջիկը ստիպված մնում է եղբոր հետ տանը: Մի օր նա չէր նկատել, թե ինչպես է եղբայրը ցատկել պահարանի վրայից և կոտրել ոտքը:

Դպրոցում առաջադիմությունը բավականին ցածր է: Երբ գնում է դպրոց, բոլորը խուսափում են շփվել նրա հետ, որովհետև նա գրեթե

ամեն անգամ դպրոց է գնում պատուված կիսամաշ շորերով, և նրանից վառարանի ծխի հոտ է գալիս: Ընկերները նրան հաճախ են ծաղրում և հաճախ ասում նրան. «Հեռու գնա մեր կողքից, դու կեղտոտ ես և անգրագետ»: Այդ մասին իմանալով՝ Անահիտի ծնողները ընկճվում են, բայց և չեն կարողանում ոչինչ անել, քանի որ բոլորի կողմից նրանք զգում են արհամարհանք և մեծամիտ վերաբերմունք իրենց նկատմամբ:

Ծնողները երկար մտորումներից և մտատանջություններից հետո որոշեցին երեխաներին ժամանակավոր տանել ընտանիքի աջակցության կենտրոն: Որոշումը շատ ցավոտ էր, բայց ներկա իրավիճակում նրանք այլ ելք չէին տեսնում:

Թեև աջակցության կենտրոնում նրանք շրջապատված էին հոգատարությամբ, բայց ամեն օր սպասում էին, թե երբ է գալու մայրիկն ու իրենց տանի տուն: Իսկ մայրիկն ընդամենը կարողանում էր աշխատանքի ընդմիջման ժամին տեսակցել երեխաներին և խոստանալ, որ շուտով ամեն ինչ լավ կլինի, և նրանք կրկին կլինեն միասին:

Լսողության խանգարումներ ունեցող երեխայի նկարագիր

Լուսինեն 13 տարեկան է, փոքր հասակում նա չէր արձագանքում անվանը և շրջապատի ձայներին, խաղում էր միայնակ: Ծնողները անհանգստացան և դիմեցին բժիշկների օգնությանը, որոնք, հետազոտելով երեխային, ախտորոշեցին երկկողմանի ծանրալսություն: Լուրն անսպասելի էր, և երկար ժամանակ նրանք չէին հասկանում՝ ինչու հենց իրենց հետ պետք է նման դեպք տեղի ունենար: Այսօր Լուսինեն արդեն մեծ է, նա կրում է լսողական սարքեր: Թեև հասկանում է դիմացինին, բայց խոսում է անհասկանալի, աղավաղված հնչյուններով և ամեն անգամ լարվում է, երբ շրջապատի մարդիկ չեն հասկանում իրեն և խնդրում են կրկնել ասածը: Ճանաչում է տառերը, սակայն դժվարանում է կարդալ և գրել, և ամեն անգամ առաջադրանքը կատարելիս ուսուցչուհին կրկնում է հրահանգը, ինչը նույնպես հավելյալ լարվածություն է առաջացնում երեխայի մոտ:

Փոքր տարիքում նա չէր հասկանում՝ ինչ է կատարվում իր հետ, սակայն այժմ նա գիտակցում է իր խնդիրը և անասելի ցավ է զգում,

զայրանում շրջապատի հանդեպ, դառնում ագրեսիվ, կոպտում ծնողներին, մեղադրում նրանց իրեն այդպիսին լույս աշխարհ բերելու համար: Լուսինեն երկար վարսերով փակում է ականջները, որպեսզի մարդիկ չտեսնեն լսողական սարքերը և չխղճան իրեն: Դասարանում շատ ակտիվ է, հրմշտում է դասընկերներին, խանգարում դասը, ցանկանում է լինել ուշադրության կենտրոնում: Հաճախ չարախոսում է դասընկերներին և հայտնվում կոնֆլիկտային իրավիճակներում: Ծնողները սաստում են նրան, սակայն երկխոսությունը կրկին վիճաբանության է վերածվում: Մի օր էլ նա փախել էր տանից և որոշել պատժել ծնողներին: Երեխան կատարել է նաև ինքնասպանության փորձեր: Ծնողները անհանգիստ են և չեն կողմնորոշվում՝ ինչ անել:

Ամփոփում: Այս վարժության քննարկումներից հետո վարողը հիշեցնում է մասնակիցներին, որ նրանք, ապրումակցելով տարբեր խնդիրներ ունեցող ծնողներին, պետք է փորձեն մասնագետի դիրքերից վերլուծել իրավիճակը և չնույնանալ ծնողի և նրա հույզերի հետ՝ հասկանալ նրանց, բայց և արհեստավարժ աջակցություն տրամադրել նրանց՝ առանց հավելյալ ապրումների:

Հանդիպում տասնմեկերորդ

1. Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը
2. Ակտիվացնող վարժության իրականացում
3. Մասնագետ-ծնող փոխհարաբերություններում «ագրեսիվ ծնողական տիպ»-ի բնութագրում
4. Դերային խաղի իրականացում
5. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Վարողը ողջունում է մասնակիցներին և խնդրում ներկայացնել նախորդ հանդիպմանը ստացված տպավորություններն ու եզրակացությունները:

Այնուհետև նշում է, որ երեխաներին տրամադրվող հոգեբանական աջակցության ընթացքում, երբ զուգահեռաբար մասնագիտական խորհրդատվություն է իրականացվում նաև ծնողների հետ, մասնագետն ականայից ծնողների տիպեր է առանձնացնում՝ պայմանավորված ինչպես նրանց անձնային առանձնահատկություններով, այնպես էլ երեխայի խնդրի ընդունման փուլային ընթացքով: Երեխայի խնդրի գիտակցումն ու ընդունումը բավականին երկարատև գործընթաց է, երբ յուրաքանչյուր փուլ բնորոշվում է ծնողի ուրույն հոգեվիճակներով, հուզական ապրումներով և ինքնաարտահայտման տարատեսակ դրսևորումներով: Ուստի մասնագետների համար կարևորվում է ինչպես ծնող-երեխա, այնպես էլ մասնագետ-ծնող փոխհարաբերությունների վերլուծությունը: Մասնագետը ծնողների տեսանկյունից նախ և առաջ հասարակության այն ներկայացուցիչն է, որը պիտի հերքի կամ հաստատի խնդրի առկայությունը. այն բավականին հուզումնալի գործընթաց է և կարող է պատճառ հանդիսանալ ծնողների մոտ ամենատարբեր պաշտպանական մեխանիզմների ակտիվացման համար: Վերջիններս էլ աշխատանքի սկզբնական փուլում կարծես պատնեշ են ստեղծում մասնագետ-ծնող համագործակցության ձևավորման համար: Այդ նպատակով հանդիպումների հաջորդ շարանն ուղղվում է ծնող-մասնագետ հոգեբանական առանձնահատկությունների և ծնողական տիպերի վերլուծությանն ու քննարկմանը:

Ակտիվացնող վարժության իրականացում:

Վարողն առաջարկում է իրականացնել հետևյալ ակտիվացնող վարժությունը, երբ յուրաքանչյուր մասնակից նշում է իր ձախ կողմում նստած մասնակցի որևէ բացասական որակ՝ առաջարկելով այն փոխարինել այլ՝ ավելի դրական, կառուցողական որակով: Նշված ակտիվացնող վարժության իրականացումը թրեյնինգի իրականացման տվյալ ժամանակահատվածում թույլատրելի է, քանզի աշխատանքային այս փուլում արդեն ձևավորված է փոխվստահության և հարգանքի մթնոլորտը:

Մասնագետ-ծնող փոխհարաբերություններում ծնողի «ագրեսիվ տիպ»-ի բնութագրում:

Թրեյնինգավարը նշում է, որ տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ծնողների հաճախ հանդիպող տիպերից է «ագրեսիվ ծնողը», որը պայմանավորված է ծնողի՝ խնդրի մերժմամբ և անհատական առանձնահատկություններով: Երեխայի խնդիրը նրա մոտ շփոթվածության, անօգնականության, վախի և ինչու չէ՝ մեղքի զգացումներ է առաջացնում: Որպես հետևանք՝ այդ զգացումները հաճախ փոխակերպվում են ագրեսիայի և արտահայտվում հատկապես հոգեբանի աշխատասենյակում, քանզի, ինչպես արդեն վերը նշվեց, մասնագետն այն օղակն է, որը պետք է ևս մեկ անգամ անդրադառնա իր համար այդքան հոգեխռով խնդրին:

Դերային խաղի իրականացում:

Հաջորդիվ վարողն առաջարկում է իրականացնել դերային խաղ՝ ուղղված մասնագետ- «ագրեսիվ ծնող» հանդիպման խաղարկմանը:

Երկու աթոռ դրվում է դեմառդեմ և ընտրվում է 2 մասնակից, որոնցից յուրաքանչյուրին տրվում է «ագրեսիվ ծնողի» և մասնագետի դերերը՝ առաջարկելով խաղարկել այն: Նախապես ներկայացվում է մասնակիցներին հետևյալ իրավիճակը.

Իրավիճակ

Զարգացման խնդիրներ ունեցող երեխայի ծնողը իր երեխայի հետ եկել է հոգեբանի մոտ խորհրդատվության: Թեպետ ծնողը ներքուստ

գիտակցում է երեխայի խնդիրը, բայց արտաքուստ ագրեսիվ է և մերժողական: Սակայն հանդիպման ավարտին ձևավորվում է մասնագետ-ծնող փոխվստահության և փոխհամագործակցության մթնոլորտը, և հաջորդ հանդիպումն արդեն ծնողի համար դառնում է ցանկալի և սպասված:

Նշված իրավիճակում ծնողի դերը խաղարկող մասնակիցը փորձում է զայրույթ և ագրեսիա ուղղել մասնագետին, անտեղի վիճել, կոպտել նրան, իսկ երբ անդրադառնում են երեխայի խնդրին, կիրառում է նմանատիպ արտահայտություններ. «Ինչ է, կարծում եք ես անտեսել եմ երեխայիս, չեմ շփվել, խոսել նրա հետ», «Ինչ գենետիկ պայմանավորվածություն, ոչ մի հարազատս նման խնդիրներ չունի» կամ «Ինչ խնդիր, նման բան չկա, ուղղակի երեխայի տատիկն էլ է շատ ուշ խոսել» և այլն:

Իսկ մասնագետն ուղղակի կամ անուղղակի հարցերի միջոցով փորձում է հնարավորություն ընձեռել ծնողին վերհանելու կուտակված ապակառուցողական հույզերը, սեփական ապրումները, ինչպես նաև թույլ տալ կողքից դիտարկել վարքը՝ զերծ մնալով իր անձին ուղղված քննադատական և մեղադրական վերաբերմունքից, նպաստելով իրավիճակի դրական հանգուցալուծմանը:

Եթե մտովի տվյալ հանդիպումը բաժանենք փուլերի, ապա առաջին փուլը մասնագետի կողմից ինֆորմացիայի հավաքագրման և ծնողի հույզերի վերհանման փուլն է: Այս փուլում մասնագետները կարող են կիրառել հետևյալ հարցադրումները, որոնք նպաստում են առաջադրված խնդրի լուծմանը.

- «Ինչ անհանգստություններ ունեք, և դրն է մասնագետին այցելելու ձեր պատճառը»:
- «Հաճախ բոլորս էլ սեփական երեխաներին համեմատում ենք հասակակիցների հետ, իսկ դուք երբևէ համեմատել եք»:
- «Եթե որևէ ծնողի տեղեկացնեին, որ իր երեխան ունի զարգացման խնդիրներ, ինչ եք կարծում՝ ինչ ապրումներ կունենար այդ ծնողը»:
- «Ինչ եք կարծում՝ այդ ծնողի հույզերի ու ապրումների դրսևորումը բնական է նման իրավիճակներում»:

Պետք է նշել նաև, որ հարցերի բնույթն ու հաջորդականությունը

թույլ կտան արտահայտել սեփական հույզերն ու լիցքաթափվել, ինչպես նաև բնական և նորմալ համարել նման բացասական հույզերի առկայությունն ու արտահայտումը:

Հանդիպման հաջորդ ենթափուլը այցելուին իր խնդրի հետ առերեսման կամ, ինչպես ընդունված է հոգեբանական խորհրդատվության բնագավառում անվանել, կոնֆրոնտացիայի և ստեղծված իրավիճակից ելքերի առաջադրման փուլն է:

Վերջինիս բնորոշ են հետևյալ հարցադրումները.

- «Իսկ դուք ի՞նչ զգացիք, երբ առաջին անգամ գիտակցեցիք երեխայի խնդիրը կամ Ձեզ ակնարկեցին այդ մասին»:
- «Եթե Ձեր ծանոթները հայտնվեին նման իրավիճակում, ինչպիսի՞ աջակցություն կցուցաբերեիք նրանց, ի՞նչ խորհուրդներ կտայիք և այլն»:
- «Որքանով է հավանական, որ տարբեր մասնագետներ միևնույն ժամանակահատվածում երեխային դիտարկելիս կարող են սխալվել:

Այս պարագայում շատ կարևորվում է մասնագետի ապրումակցման ունակությունների դրսևորումը, քանզի այն թույլ կտա ծնողի մոտ ձևավորել հասկացված լինելու զգացում, որն էլ իր հերթին կնպաստի փոխվստահության ձևավորմանը:

Պետք է նշել նաև, որ ծնողի ցուցաբերած ոչ համարժեք հուզական հակազդումներն ու ագրեսիան անհրաժեշտ է չանձնավորել և չունենալ վիրավորանքի զգացում:

Ամփոփում:

Ամփոփելով հանդիպման ավարտը՝ ցանկալի է շեշտադրել մասնագետի կողմից հնչեցրած անուղղակի հարցադրումների բնույթն ու վերջիններիս միջոցով ծնողի կողմից հնարավոր ելքերի վերհանումը: Ինչպես նաև առաջարկել մշակել նմանատիպ հարցերի խումբ, քննարկել դրանք և ամրապնդել:

Վարողը առաջադրում է մասնագետներին տարբեր իրավիճակներում մշակել հարցադրումների նման շարան մասնագիտական այդ հմտությունը ամրապնդելու, ավտոմատիզացնելու նպատակով:

Հանդիպում տասներկուերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Ակտիվացնող վարժության իրականացում:
4. Մասնագետ-ծնող փոխհարաբերություններում «մեծամիտ ծնողական տիպի» բնութագրում
5. Գործնական առաջարկներ
6. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը, ակտիվացնող վարժության իրականացում:

Վարողը ողջույնի խոսքից հետո, անդրադառնում է նախորդ հանդիպման քննարկումներին, լսում մասնակիցների առաջարկած մոտեցումներն ու հարցադրումները «ագրեսիվ ծնողական տիպի» հետ հարաբերվելիս:

Այնուհետև առաջարկվում է մասնագետներին նշել որևէ դրական անձնային որակ, որը հիմնաքար կարող է լինել սեփական ինքնավստահության ձևավորման համար, ինչպես նաև խթանել երեխա-ծնող արդյունավետ փոխհարաբերությունների ձևավորումը: Այս ակտիվացնող խաղ-վարժությունը հնարավորություն է տալիս նաև ինքնավերլուծություն իրականացնել և սեփական ծնողավարության հմտությունները դիտարկել ինչպես իր, այնպես էլ դիմացինի աչքերով:

Հաջորդիվ՝ մասնակիցներին առաջարկվում է վերլուծել և համեմատել «ագրեսիվ» և «մեծամիտ» ծնողական տիպերը, մեկնաբանել այս կամ այն տիպի դրսևորումները: Այդ գործընթացը հնարավորություն կտա զարգացնել մասնագետների հոգեբանական մտածողությունն ու մասնագիտական ինտուիցիան:

Մասնագետ-ծնող փոխհարաբերություններում «մեծամիտ» ծնողական տիպի բնութագրում:

Թրեյնինգավարը, ամփոփելով մասնակիցների դիտարկումներն ու քննարկումները, հակիրճ ներկայացնում է ծնողական «մեծամիտ տիպի բնութագիրը»՝ նշելով, որ եթե «ագրեսիվ ծնողական տիպի» հիմքում

ընկած է խնդրի անուղղակի մերժումը, անօգնականության զգացումը, ապա մեծամիտ ծնողական տիպի ձևավորումը երեխայի խնդրով և անհատական առանձնահատկություններով պայմանավորված ցածր ինքնագնահատականի և անհինքնավստահության հետևանք է, սեփական մեղքի զգացումի յուրօրինակ փոխհատուցում:

Մասնակիցներին առաջարկվում է միասին գրատախտակի վրա ստեղծել մեծամիտ ծնողի հոգեբանական դիմանկարը՝ գրառելով ինչպես նրան բնորոշ անձնային որակները, այնպես էլ նրա կողմից հնչեցրած հնարավոր արտահայտություններն ու մտահանգումները: Ծնողների այս տեսակը հաճախ է կիրառում հետևյալ արտահայտությունները. «ես ամեն ինչ գիտեմ իմ երեխայի մասին», «ոչ ոք, ինձանից լավ չի կարող ճանաչել իմ երեխային», «ես ինքս կարող եմ օգնել նրան», «իմ երեխան ամեն ինչ գիտի, ուղղակի Ձեզ մոտ չի արտահայտվում», «ես լավագույն մասնագետների հետ եմ շփվել և քաջատեղյակ եմ երեխայիս մասին» և այլն:

Այնուհետև վարողը մասնագետների հետ միասին քննարկում և վերլուծում է նշված որակների և մտահանգումների պատճառահետևանքային կապերը, վերջիններիս դրսևորման դրդապատճառներն ու հաղթահարման ուղիները: Քանի որ մեծամտությունը ներկայանում է որպես անհինքնավստահության ու ցածր ինքնագնահատականի փոխհատուցում, ինչպես նաև ինքնադրսևորման ու ինքնահաստատման միջոց, ապա նման ծնողների հետ աշխատելիս ցանկալի է իրականացնել «ես» կերպարի վերլուծություն, դրական որակների, ներուժի բացահայտում, խարախուսում և ամրապնդում:

Գործնական առաջարկներ:

Վարողը մեծամիտ ծնողական տիպի վերլուծությունից հետո ներկայացնում է հետևյալ առաջարկները.

- Այս տիպի հետ հանդիպման ընթացքում ցանկալի է շեշտադրել ծնողի անձը՝ ժամանակավորապես մի կողմ դնելով երեխայի զարգացման խնդիրներ ունենալու հիմնահարցը, որպեսզի ծնողը իրեն արժևորված զգա մասնագետի կողմից:
- կարելի է անուղղակի անդրադարձ կատարել նրա անձնական և գործնական հաջողություններին: Որպես կանոն նմանատիպ ծնող-

ները հատկապես առաջին հանդիպմանը անդրադառնում են իրենց անձնական կյանքին ու մասնագիտական ձեռքբերումներին, իսկ մասնագետն աննկատ մատնանշում է դրանք՝ ամրապնդելով որպես ուժեղ կողմ: Վերջինս կապահովի սեփական անձի նկատմամբ ինքնավստահության ձևավորումը, ինչպես նաև մասնագետի կողմից կարևորված ու արժևորված լինելը:

- կարելի է նաև հենց ծնողից լսել ստեղծված իրավիճակում տարբեր ելքերի առկայության քննարկումները՝ մատնանշելով նրան՝ որպես բավականին տեղեկացված ծնողի, ու կարևորելով նրա կարծիքը:
- Որպես կանոն այս ամենից հետո ծնողը բավականին ինքնավստահ է դառնում, ինչն էլ նպաստում է պաշտպանական մեխանիզմ հանդիսացող մեծամտության հաղթահարմանը և մասնագետ-ծնող համագործակցության ձևավորմանը:

Ամփոփում:

Մասնագետը հանդիպման վերջում առաջադրում է տարբեր մարդկանց հետ զրույցների ընթացքում փորձել որսալ զրուցակցի դրական կողմերն ու հնարավորությունները, անուղղակի անդրադարձ կատարել դրանց ուղղությամբ՝ վերջիններս զարգացնելու և ամրապնդելու նպատակով:

Հանդիպում տասներեքերորդ

1. Ողջույնի խոսքի
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Դերային խաղի իրականացում
4. «Հիասթափված» ծնողական տիպի ներկայացում և վելուծություն
5. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Ողջունելով մասնակիցներին՝ վարողը քննարկում է նախորդ հանդիպման ընթացքում տրված առաջադրանքը և իրազեկվում նրանց հաջողությունների և թերացումների մասին, հաջորդիվ առաջարկելով իրականացնել դերային խաղ՝ ըստ հանդիպման թեմայի բովանդակության:

Դերային խաղի իրականացում:

Վարողը խնդրում է որևէ կամավորի մասնակցել խաղին և բոլորից գաղտնի առաջարկում ներկայացնել հուսալքված և հիասթափված ծնողի կերպարը: Այնուհետև մասնակիցներից ևս մեկին էլ առաջարկվում է իրականացնել մասնագետի դերը: Վերջինս նույնպես, ինչպես և մյուս մասնակիցները, տեղյակ չեն, թե ծնողական որ տիպն է ներկայացնելու ընտրված կամավորը: Մասնագետ-ծնող հանդիպման խաղարկումից հետո, առաջարկվում է մասնակիցներին կռահել ներկայացվող ծնողական դերը, ինչպես նաև նշված դատողություններն առավել պատկերավոր դարձնելու նպատակով հավելել այն այլ բնութագրող մտահանգումներով և արտահայտություններով: Պետք է նշել նաև, որ վարողը վերը նշված ծնողական կերպարը համարժեք ներկայացնելու նպատակով նախապես հուշումներ ու ցուցումներ է տալիս այն խաղարկող մասնակցին: Վերջինիս իրականացումը նպաստում է նաև սովյալ ծնողական կերպարի հանդեպ ապրումակցման զարգացմանը և սովյալ կերպարն ընտրելու ծնողի դրդապատճառների գիտակցմանը:

«Հիասթափված» ծնողական տիպի ներկայացում և վելուծություն:

Դերային խաղից հետո թրեյնինգավարը նշում է, որ հուսահատված, հիասթափված ծնողական տիպին են պատկանում այն ծնողները, որոնք իրենց բնույթով հաճախ խուսափում են այնպիսի իրավիճակներից, որտեղ պետք է պայքարել, հաղթահարել մի շարք խնդիրներ, շեղվել ընդունված չափանիշներից: Նշված ծնողական տիպի ձևավորմանը նպաստում են ընտանիքի դիրքորոշումը տվյալ խնդրի վերաբերյալ, ընտանիքում զարգացման խնդիրներ ունեցող երեխայի ի հայտ գալով անուղղակիորեն պայմանավորված ամուսնալուծությունը և այլն: Ոչ հազվադեպ, երբ մայրն ու հայրը տեղեկանում են իրենց երեխայի մոտ դրսևորվող խնդրի մասին, հայրը խնդրի լուծման միակ տարբերակը համարում է ամուսնալուծությունը՝ փաստացիորեն փախչելով ստեղծված իրավիճակից, ինչն էլ իր հերթին ավելի է սրում մայրերի մոտ հուսահատության զգացումը: Հուսահատության և հիասթափության զգացումները, թեպետ բնորոշ են գրեթե բոլոր ծնողներին, որոնք լույս աշխարհ են բերել ինքնատիպ զարգացում ունեցող երեխա, սակայն մասնագետները և շրջապատի մարդիկ կարող են արմատավորել կամ աջակցել այդ դժվարության հաղթահարմանը, նորանոր ուղիների որոնմանը:

Ամփոփում:

Այնուհետև վարողը, հանդիպումն ամփոփելով, ևս մեկ անգամ արապնդում է հիասթափված ծնողի կերպարի ձևավորման և դրսևորման պատճառականությունը:

Հանդիպում տասնչորսերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Ակտիվացնող խաղ-վարժության իրականացում
4. «Անտարբեր» ծնողական տիպի բնութագրում
5. Վարժության իրականացում
6. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը, ակտիվացնող վարժության իրականացում:

Վարողը բոլոր մասնակիցներին ողջունելուց հետո առաջարկում է աշխատանքային հանդիպումը սկսել հետևյալ խաղ վարժությամբ. յուրաքանչյուր մասնակցին առաջարկվում է իր ծնողական «ես»-ին մտովի հաղորդել որոշակի գույն, որից հետո բարձրաձայնել, թե ինչ գույնով են այն պատկերացրել: Օրինակ՝ իմ ծնողական «ես»-ը կամ ծնողական մասը պատկերացնում եմ կարմիր գույնով պատված, որովհետև...: Այս խաղ վարժությունն ունի ակտիվացնող նպատակ և ինքնավերլուծության, ինքնաընդունման միտումներ:

«Անտարբեր» ծնողական տիպի բնութագրում:

Թրեյնինգավարը մասնակիցներին առաջարկում է ներկայացնել իրենց պատկերացումներն «անտարբեր ծնող» հասկացության վերաբերյալ, ինչպես բնականոն զարգացում, այնպես էլ զարգացման խնդիրներ ունեցող երեխայի ծնողների պարագայում: Այնուհետև վարողի կողմից ներկայացվում է անտարբերության դրսևորման պատճառներն ու գործոնները: Անտարբերությունը մի դեպքում կարծես հիասթափության, դեպրեսիվ ֆոնի, գործելու ցանկության բացակայության տրամաբանական շարունակությունն է, իսկ մյուս դեպքում կարող է պայմանավորված լինել ծնողավարության հմտությունների բացակայությամբ, կրթական և գիտակցական ցածր մակարդակով, մայրական բնագրի խարխլմամբ, ինչու չէ՝ հոգեկան խնդիրներով և այլն: Կրթական և ինտելեկտուալ զարգացման ցածր մակարդակի դեպքում ծնողի անտարբերության հաղթահարման առաջին քայլերից է ծնողավարության վե-

րաբերյալ ինֆորմացիայի տրամադրումը, ծնողավարման տարրական հմտությունների զարգացումը: Իսկ մյուս պարագայում, երբ անտարբերությունը ձևավորվել է հիասթափության հենքի վրա, անհրաժեշտ է կարգավորել տրամադրության բացասական հուզական ֆոնը և, հաշվի առնելով այցելուի ներուժը, մշակել պայքարելու, առաջ շարժվելու ռազմավարության նոր ուղիներ:

Վարժության իրականացում:

Ծնողի «անտարբեր տիպի» ներկայացումից հետո մասնակիցներին առաջարկվում է ունկնդրել հետևյալ պատմությունը.

Պատմություն

Կար չկար երկու հարևան, երկուսն էլ ուրախ, անհոգ ու երջանիկ ապրում էին դուռ- դռան: Երկուսն էլ երազում էին գեղեցիկ այգի ունենալ, մրգատու ծառեր տնկել, ծաղիկներ աճեցնել և այլն, իսկ աշնանն էլ բերքը հավաքել և հպարտանալ սեփական քրտինքով ստեղծած բարիքի համար: Եվ որոշեցին հարևաններն իրենց տան առաջ փռված հողը փորել, վարել, մշակել, տնկիներ բերել, տնկել ու հրաշք այգի դարձնել: Մի քանի տարի հետո այգին պիտի փարթամանար կանաչեր, նորաթուխ տնկիները մեծանային և տային այդքան բաղձալի առաջին պտուղները:

Հարևան այգեպանները երազում էին ամռան շոգին թիկն տալ ծառերին և անուշ-անուշ սավառնել երազանքների գրկում: Սակայն գարնանային մի գիշեր կարկուտ ու ցրտահարություն եղավ, ավերեց ողջ այգին՝ նորաթուխ տնկիներն ու թփերը, ծառերն ու ծաղիկները: Առավոտյան, երբ հարևաններն արթնացան, տեսան բնության արհավիրքի հետևանքները, ծնկի իջան և ասես լալկվեցին, աչքերից հոսեցին արցունքները, հուսահատությունից թուլացան և մի քանի օր շարունակ օր ու գիշեր անկողին ընկան: Հարևաններից մեկը ուշքի եկավ, թափ տվեց իրեն և շարունակեց խնամել այգին, ջրել այն, փորել և պարարտացնել: Մյուս հարևանը խեղճացած էր և հուսալքված, ինչ-որ բան անելու չնչին ցանկություն անգամ չունեց: Չնայած ընկերոջ հորդորներին և սթափեցնող կոչերին՝ չէր ցանկանում շարունակել սիրելի այգու խնամքն ու սերը, միևնույն է, ոչինչ չէր ուզում անել: Հիասթափության

և անտարբերության ալիքը զորեղ էր, պայքարելու մղումը, սեփական ուժերի հանդեպ ինքնավստահությունը՝ զրոյացված: Իսկ հարևանը չէր հանձնվում, նա շարունակում էր անգամ ընկերոջ այգու համար մարտնչել: Որոշ ժամանակ հետո, երբ հուսալքված հարևանը ոտքն իջեցրեց անկողնուց, աչքը հառեց պատուհանին ու ինչ տեսնի՝ խնձորենու ճյուղը ծաղկել է.....

Ընթերցումից հետո մասնակիցներին առաջարկվում է մեկնաբանել և վերլուծել վերը նշված պատմության մեջ ներկայացված փոխաբերությունը, անտարբերության և հիասթափության բացասական հետևանքները, այնուհետև անդրադարձ է կատարվում հոգեբանական աշխատանքներում փոխաբերության դերին և կարևորությանը:

Ամփոփում:

Հանդիպման ավարտին մասնակիցներին առաջադրվում է հորինել որևէ թերապևտիկ հեքիաթ և ներկայացնել հաջորդ հանդիպմանը:

Հանդիպում տասնհինգերորդ

1. Ողջույնի խոսք
2. Անդրադարձ նախորդ հանդիպմանը
3. Վարժության իրականացում
4. «Չհամագործակցող» ծնողական տիպի վերլուծություն
5. «Չհամագործակցող» ծնողին համագործակցության դաշտ բերելու ռազմավարությունների մշակում
6. Ամփոփում

Ողջույնի խոսք, անդրադարձ նախորդ հանդիպմանը:

Վարողը ողջունում է բոլորին, անդրադարձ է կատարվում նախորդ հանդիպմանը, ընթերցվում են մասնակիցների կողմից մշակված թե՛րապևտիկ պատմությունները:

Վարժության իրականացում:

Թրեյնինգավարը մասնակիցներին առաջարկում է իրականացնել հետևյալ վարժությունը. շրջանի ներսում փոքրիկ սեղանի վրա դրվում է A2 ձևաչափի գծագրական մեկ թուղթ և նույնքան գունավոր մատիտներ, որքան որ մասնակիցների թիվն է: Այնուհետև բոլոր մասնակիցներին առաջարկվում է որոշակի կարճ ժամանակահատվածում այդ թղթի վրա միասին նկարել բնության պատկեր: Ժամանակը սպառվում է, բոլորը մատիտները ցած են դնում և սկսում կիսվել տպավորություններով՝ շեշտելով աշխատանքի արդյունավետությանը նպաստող և խանգարող գործոնները, ինչպես նաև քննարկվում է խաթարող գործոնների մեկուսացման կամ հաղթահարման ուղիները, շեշտադրվում որևէ գործունեություն իրականացնելիս համագործակցության կարևորությունը:

«Չհամագործակցող» ծնողական տիպի վերլուծություն:

Այնուհետև վարողը նշում է, որ երբ երկու և ավելի մարդիկ միևնույն ժամանակահատվածում իրականացնում են որևէ համատեղ գործունեություն, դժվար է խոսել այդ գործունեության արդյունավետության մասին, եթե բացակայում է համագործակցությունը, նախապես մշակված աշխատանքային պլանը, գործունեության բաշխումը և այլն: Համագործակցությունը կարևորվում է նաև մասնագետ-ծնող փոխհարաբե-

րությունների համատեքստում: Ինչպես երեխայի դաստիարակության ժամանակ ծնողների և ընտանիքի այլ անդամների համագործակցությունն է տալիս իր դրական արդյունքները, այնպես էլ մասնագետ-ծնող համագործակցությունը դառնում է երեխայի խնդրի հաղթահարման հիմնասյունը: Սակայն բազում ծնողներ կարծում են, թե մասնագետն իր «կախարդական փայտիկով» շաբաթը մեկ կամ երկու անգամ մինչև մեկժամյա հանդիպումներով կտա սպասվելիք արդյունքը, և ամբողջովին հետ են քաշվում մասնագետ-երեխա փոխհարաբերության դաշտից: Իսկ մասնագետի առջև խնդիր է առաջանում նրբանկատորեն, բնականաբար առանց բախումների, ծնողին «բերել» մասնագետ-երեխա-ծնող համագործակցային եռամիասնություն:

«Համագործակցող» ծնողին համագործակցության դաշտ բերելու ռազմավարությունների մշակում:

Մասնագետ-ծնող-երեխա համագործակցության կարևորությունը շեշտադրելուց հետո առաջարկվում է յուրաքանչյուրին նշումներ կատարել, թե ինչպես կարելի է չհամագործակցող ծնողին ներքաշել համագործակցային դաշտ և վերջինիս իրականացման նպատակով մշակել նվազագույնը երկու ռազմավարություն: Այս ամենից հետո յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է իր կողմից մշակված ռազմավարությունը, այնուհետև քննարկում դրանք:

Գործնական խորհուրդներ:

- Յուրաքանչյուր հանդիպումից հետո խնդրել, որ ծնողը կապի մեջ լինի մասնագետի հետ գոնե հեռախոսազանգով:
- Ծնողին ներկայացնել յուրաքանչյուր հանդիպման նպատակը, ինչպես նաև նպատակի վերջնարդյունքի ձեռքբերմանն ու ամրապնդմանը նպաստող և խոչընդոտող գործոնները:
- Ցանկալի է նաև առանձին հանդիպում նշանակել ծնողի հետ և քննարկել այս կամ այն նպատակին հասնելու իր մոտեցումներն ու ռազմավարությունները: Այնուհետև քննարկել դրանց արդյունավետությունը:
- Երբեմն, երբ երեխան գալիս է մասնագետի մոտ ընտանիքի այլ անդամի կամ դայակի հետ, կարելի է խնդրել որևէ նոթատետր և ամեն հանդիպման վերջում գրել հանդիպման նպատակը, իրականաց-

ված աշխատանքը և տանը վերջինիս ամրապնդման ուղիները: Ինչպես նաև խնդրել մայրիկին այդ նոթատետրում նույնպես գրառել իր կատարած աշխատանքները, դժվարությունները և այլն:

- Անհրաժեշտ է չնչին առաջընթացի դեպքում խրախուսել մայրիկին համագործակցության մոտիվացիան բարձրացնելու նպատակով և պարբերաբար աննկատորեն նրան ուղղել այն «հաղորդագրությունը», որ մասնագետը լոկ ուղղորդում է աշխատանքների ընթացքը, իսկ ծնողը, որը մշտապես երեխայի կողքին է, ամրապնդում է այն: Հակառակ դեպքում արդյունքները աննկատ կլինեն:

Ամփոփում:

Քննարկելով հանդիպումը և մասնակիցների կողմից մշակված համագործակցության ռազմավարությունները՝ վարողը հրաժեշտ է տալիս մասնակիցներին ու հիշեցնում, որ հաջորդ հանդիպումը նվիրված է լինելու նշված ծնողավարության թրեյնինգի ամփոփմանը:

Հանդիպում տասնվեցերորդ

Ամփոփում

1. Ողջույնի խոսք
2. Վարժության իրականացում
3. Նախորդ հանդիպումների ամփոփում և սպասելիքների իրականացման քննարկում
4. Հանդիպումների ընթացքում ծնողների համար ամենազվազվոր ձեռքբերման ամրագրում

Ողջույնի խոսք:

Մասնակիցները ներս են մտնում, վարողը ողջունում է նրանց, որից հետո խնդրում է կանգնած մնալ, մինչ ինքը յուրաքանչյուր մասնակցին կիրավորի նստելու: Այնուհետև վարողը, յուրաքանչյուրին բնութագրելով որևէ դրական որակով կամ բնութագրիչ արտահայտությամբ, որոնք դրսևորվել են այս տասնյակ հանդիպումների ընթացքում, առաջարկում է նստել, օրինակ՝ մտքի ճկունությամբ փայլող Ա-ն, կրեատիվությամբ աչքի ընկնող Բ-ն և այլն:

Հատուկ նշանակության ցուցանակների վրա վարողը փակցնում է ողջ հանդիպումների ընթացքում հավաքագրած լուսանկարները, իրականացված աշխատանքները և այլն՝ ամփոփիչ մթնոլորտ ստեղծելու և սկզբից մինչև վերջ հանդիպումներից մնացած հիշողություններն ու տպավորությունները հիշեցնելու նպատակով:

Թեյնինգավարը առաջարկում է մասնակիցներից յուրաքանչյուրին ներկայացնել և վերհիշել առաջին հանդիպումներին դրսևորվող սպասելիքներն ու հուզական ապրումները, խոսել, թե որքանով իրականացան սպասելիքներն այս հանդիպումների վերջում, այնուհետև արտահայտել ներկայիս հուզական վիճակը:

Հիշեցնենք, որ այս հանդիպմանը, ինչպես նախորդ հանդիպումների ժամանակ մասնակիցները նստում են շրջանաձև և արտահայտվում հերթականությամբ:

Նախորդ հանդիպումների ամփոփում և սպասելիքների իրականացման քննարկում:


Վարողը բոլոր մասնակիցներին բաժանում է A4 ձևաչափի թղթեր,

որոնց վրա պատկերված են երկու շրջանագծեր, և առաջարկում ըստ ստորև նշված ոլորտների՝ պատկերել հիստոգրամներ, որտեղ արտահայտված կլինի, թե մեկ օրվա՝ 24 ժամվա ընթացքում տոկոսային մոտավոր հարաբերակցությամբ մասնակիցներից յուրաքանչյուրը որքան ժամանակ է հատկացնում նշված ոլորտներից յուրաքանչյուրին: Առաջարկվում է յուրաքանչյուր ոլորտ ներկել որոշակի գույներով:

Ոլորտները հետևյալն են՝

- Զույգերի փոխհարաբերությունների ոլորտ
- անձնական ոլորտ
- ժամանցային ոլորտ
- ծնող-երեխա փոխհարաբերությունների ոլորտ
- մասնագիտական կամ գործնական ոլորտ
- ինտիմ ոլորտ

Գծագիրը կարող է ունենալ այսպիսի տեսք.



Հաջորդիվ յուրաքանչյուր մասնակից մեկնաբանում է ստացված

գծագիրը, և բոլորը միասին փորձում են հասկանալ պատճառահետևանքային կապերը: Ապա մասնակիցներին առաջարկվում է պատկերել մյուս շրջանագիծը այն տոկոսային հարաբերությամբ, որը նրանք կուզեին տեսնել իրենց առօրյայում, այսինքն՝ իդեալական, ցանկալի տարբերակը: Այնուհետև քննարկվում են դրան հասնելու լավագույն տարբերակները:

Հանդիպումների ընթացքում ծնողների համար ամենագլխավոր ձեռքբերման ամրագրում:

Ընդհանրացնելով քննարկումը՝ վարողը խմբի անդամներին հղում է այս ամփոփ հանդիպման «գլխավոր հաղորդագրությունը».

«Յուրաքանչյուր ծնող նախ անձ է, որն ունի բազում հետաքրքրություններ և ցանկություններ, արժեքներ և դիրքորոշումներ, ուժեղ և թույլ կողմեր, որոնց շնորհիվ էլ նա անհատականություն է՝ ինքնատիպ ու յուրօրինակ: Նախորդ հանդիպումների ընթացքում շեշտը դրվեց ծնող-երեխա փոխհարաբերությունների և հատկապես դրանց թերացումների ու դժվարությունների վրա, սակայն յուրաքանչյուր ոք երջանիկ է ու բավարարված, երբ ինքնաիրացված է իր կողմից ծավալված գրեթե բոլոր փոխհարաբերություններում՝ կին-ամուսին, կին-երեխա-ամուսին, կին-աշխատանքային գործունեություն և այլն, ունի անձնական ժամանակ՝ խորհելու, լիցքաթափվելու, կյանքի իմաստն արժևորելու համար: Ուստի կարևոր է, որ մասնագետը ծնող-երեխա փոխհարաբերությունները կարգավորելուն զուգընթաց նպաստի յուրաքանչյուր ծնողի անհատականության գիտակցմանը, ապահովի անձնային աճն ու ինքնաիրացումը, քանզի բազմաթիվ դիտարկումների արդյունքում ակնհայտ է դարձել, որ «արդյունավետ» ծնողը նա է, ով համեմատաբար կայացած է կյանքի գրեթե բոլոր հիմնական ոլորտներում, ով ժամանակ առ ժամանակ լիցքաթափվում է, ով մասնագիտության մեջ աճ է գրանցում, ով հաջողում է ծնող-երեխա փոխհարաբերություններում և այլն: Մասնագետի նմանատիպ դիրքորոշումը մասնագետ-ծնող փոխհարաբերությունների համատեքստում բերում է մասնագետի նկատմամբ «մասնագիտական համակրանքի» և վստահության ձևավորմանը, ինչպես նաև նպաստում համագործակցային հարաբերությունների հիմնմանը՝ ի շահ երեխայի, հոգուտ երեխայի»:

Ամփոփում:

Վարողը մասնակիցների հետ միասին քննարկում է ողջ թրեյնինգի արդյունքները. ինչ տվեց այն երեխաների և նրանց ծնողների հետ աշխատող մասնագետներին, արդարացան արդյոք նրանց սպասելիքները, որից հետո իրականացվում է հետևյալ ամփոփիչ վարժությունը:

Մասնագետն առաջարկում է մասնակիցներին պատկերացնել, որ շրջանի կենտրոնում խարույկ է վառվում, և խնդրում նրանց հիշել թրեյնինգի ընթացքում առաջացած բացասական, տհաճ հույզերն ու զգացմունքներն ու նետել դրանք այդ խարույկի մեջ: Այնուհետև պատկերացնել, որ յուրաքանչյուրի ձեռքում կա պարկ, հիշել այն պետքական և անհրաժեշտ, հոգեհարազատ հույզերն ու զգացմունքները, թրեյնինգի ընթացքում ձեռքբերված կարևորագույն ինֆորմացիան, որից հետո դասավորել այդ ամենը պարկի մեջ, վերցնել այն իրենց հետ և հիշել, որ այդ պարկը միշտ նրանց հետ է, անհրաժեշտության դեպքում միշտ կկարողանան օգտվել այդ պարկի պարունակությունից:

Որպես վերջաբան վարողը խրախուսում է և հաջողություն մաղթում մասնակիցներին իրենց ծավալած կարևորագույն գործունեության մեջ:

Գրականություն

1. Հարությունյան Կ., Երեխայի հանդեպ բռնության հետազոտումը և կանխարգելումը, Երևան, 2005:
2. Խորհրդատվություն և ուսուցում ծնողների համար, «Տարե 95» Հոգեբանական աջակցության և խորհրդատվության կենտրոն, Երևան, 2008:
3. Азаров Ю.П., Семейная педагогика. М., 2003
4. Бардиан А.М., Воспитание детей в семье. М., 1983
5. Бодалев А. А., Столин В. В., Общая психодиагностика. М., 1987
6. Божович Л. И., Проблемы формирования личности. М., 2001
7. Варга А.Я., Структура и типы родительских отношений. М., 2007
8. Вартанова И. И., Мотивация учебной деятельности и особенности детско-родительских отношений . Психология обучения. М., 2005
9. Влади́н В.З., Гармония семейных отношений. Алматы, 2007
10. Возрастная психология (<http://www.child-psy.ru/>)
11. Волков Б.С., Волкова Н.В., Задачи и упражнения по детской психологии. М., 1991
12. Выготский Л.С., Вопросы детской психологии. Санкт-Петербург, 1997.
13. Выготский Л. С., Психология развития человека. М., 2005.
14. Гарбузов В.И., От младенца до подростка. М., 2006
15. Дружинин В.И., Психология семьи. М., 1999
16. Изард К.Э., Психология эмоций. СПб., 1999.
17. Ильин Е. П., Эмоции и чувства. СПб., 2011.
18. Ковалёв А.Г., Психология семейного воспитания. М., 2006
19. Коновалова А. М., Отношение подростков к родителям : уважение, любовь, признание авторитета. Семейная психология и семейная терапия. М., 2009

20. Корнеева Т. В., Психологические проблемы детско-родительских отношений в неполной семье. М., 2007
21. Куковякин Г.В., Семейная педагогика и психология по возрастам. Тверь, 2008
22. Кулагина И.Ю., Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет. М., 1999.
23. Куликова Т.А., Семейная педагогика и домашнее воспитание. М., 2006
24. Леонтьев А. Н., Деятельность. сознание. личность. М., 1975.
25. Максимова Н. Л., Особенности родительского отношения, в семьях с единственным ребенком. М., 2009
26. Монтессори М., Помоги мне это сделать самому. М., 2000.
27. Мухина В.С., Возрастная психология. Москва, 1984
28. Набиуллина В. Р., Типы семейного воспитания и их разновидности. М., 2008
29. Никитин Б.П., Ступеньки творчества или развивающие игры. М., 1991
30. Обухова Л.Ф., Детская психология: теории, факты, проблемы. М., 1995
31. Обухова Л.Ф., Концепция Жана Пиаже: за и против. М., 1981
32. Овчарова Р. В., Психология родительства : учеб. пособие для студентов вузов, обучающихся по направлению и специальностям психологии. М., 2005
33. Овчарова Р. В., Родительство как психологический феномен : учебное пособие. М., 2006
34. Рахимов А.З., Психология семьи. Уфа, 2007
35. Рождественская Н. А., Негармоничные стили семейного воспитания и восприятие родителями своих детей. М., 2002
36. Смирнова Е. О., Структура и динамика родительского отношения в онтогенезе ребенка. М., 2007
37. Соколова Е.Т., Николаева В.В., Особенности личности при пограничных

- расстройств и соматических заболеваниях. М., 1995
38. Фирсова Е. Ю., Особенности детско-родительских отношений в семьях умственно отсталых школьников. М., 2009
39. Хрестоматия. /под ред. Д.Я. Райгородского/. Подросток и семья. Самара, 2002
40. Широкова Г.А., Справочник дошкольного психолога. Ростов-на-Дону, 2008
41. Эльконин Д.Б., Избранные психологические труды. М., 1989

